

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱՎԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

“Տեղական մակարդակում կլիմայական ռիսկերի գնահատում” ծրագիր

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանում դիմակայուն համայնքների կայացմանն ու զարգացմանը, խթանելով համայնքի բնակչության և ՏԻՄ-երի ակտիվ ներգրավվածությունը կլիմայի փոփոխության ազդեցությանն արձագանքելու գործում՝ համայնքում կլիմայական ռիսկերը գնահատելու և դրանց նվազեցմանն ուղղված համարժեք գործողություններ իրականացնելու միջոցով

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հաշվետվություն

ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ)
հիմնադրամի կողմից իրականացվող «Տեղական մակարդակում կլիմայական ռիսկերի
գնահատում» ծրագիր

Ֆինանսական աջակցություն՝ Ավստրիայի զարգացման գործակալություն (ԱԶԳ)

Տևողություն՝ հունիսի 24, 2022 – փետրվարի 20, 2023 թ.

Ծրագրային թիմ

Աշոտ Սարգսյան՝ ծրագրի համակարգող

Սուսան Մնացականյան՝ ԱՌԿ փորձագետ, վերլուծական թիմի համակարգող

Վահան Հարությունյան՝ ԱՌԿ փորձագետ, քարտեզագրման պատասխանատու

Անժելա Բադայան՝ վերլուծաբան, Լոռու մարզային թիմի պատասխանատու

Արթուր Գևորգյան՝ կլիմայագետ

Նաիրա Մանդայան՝ վիճակագրության մասնագետ

Տաթևիկ Սիմոնյան՝ աղետների տեղեկատվության կառավարման մասնագետ

Աբրահամ Արտաշեսյան՝ համայնքային ֆինանսների փորձագետ

Տվյալների հավաքագրման, ճշգրտման և թվայնացման տեղական թիմի անդամներ՝

Մեսրոպ Հովհաննիսյան՝ համակարգող

Աշխեն Ավագյան

Հենրիկ Դավթյան

Արա Առաքելյան

Ծրագրի իրականացմանն աջակցած կառույցներ՝

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, Շիրակի, Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի և Սյունիքի մարզպետարաններ, Իջևան, Ստեփանավան, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Անի, Վայք, Տեղ և Գորիս խոշորացված համայնքների համայնքապետարաններ

Տիտղոսաթերթում օգտագործված ատկերակը վերցված է https://www.flaticon.com/free-icon/climate-change_2644248?related_id=2644151&origin=search կայքէջից

Բովանդակություն

1. Ներածություն.....	4
2. Համայնքի ներկայիս իրավիճակի նկարագրություն.....	5
2.1. Համայնքի սոցիալ-տնտեսական նկարագիր.....	5
2.2. Մարզին սպառնացող բնածին վտանգավոր երևույթներ և կլիմայի փոփոխության համատեքստում վերջիններիս դրսևորումներում արձանագրված զարգացման միտումներ.....	7
2.3. Համայնքի կլիմայական պատկերը և վերջին տասնհինգ տարիներին համայնքում տեղի ունեցած արտակարգ դեպքեր.....	12
2.4. Համայնքի ֆինանսական միջոցներ.....	16
3. Ծրագրի իրականացման գործընթաց.....	17
3.1. Մեթոդաբանություն.....	17
3.2. Աշխատանքների ամփոփ նկարագիր.....	18
3.3. Տվյալների հավաքագրման գործիքակազմ և համայնքում առանձին գործիքների կիրառման հետ կապված առանձնահատկություններ.....	20
4. Համայնքին սպառնացող վտանգներ և վերջիններիս ռիսկերին դիմակայելու համայնքին առաջարկվող հնարավոր լուծումներ.....	27
4.1. Համայնքի խոցելիության և ռիսկերի գնահատման արդյունքներն ըստ բնակավայրերի, խոցելի ոլորտների և սպառնացող վտանգավոր երևույթների.....	27
4.2. Համայնքի կողմից ընտրված գերակա լուծումներ.....	46
5. Եզրակացություն.....	52
6. Հավելվածներ.....	53
7. Լուսանկարներ.....	58

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ (ADB)
ԱԶԳ	Ավստրիական զարգացման գործակալություն (ADA)
ԱԻ	Արտակարգ իրավիճակներ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՄՆ	Ամերիկայի միացյալ Նահանգներ
ԱՄՆՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID)
ԱՌՆԱԴ	«Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ
ԳՄՀԸ	Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)
ԵՄ	Եվրամիություն (EU)
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԽԿԳ	Խոցելիության և կարողությունների գնահատում (VCA)
ԿԻԿՄՄՖ	Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա (IFRC)
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ՀԲ	Համաշխարհային բանկ (WB)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿԵ	Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներ
ՃԿԱԿ	ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն (UN)
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF)
ՇԶՀԳ	Շվեյցարական զարգացման համագործակցության գրասենյակ (SDC)
ՊԳԾ	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության ծրագիր (FAO)
ՊՀԾ	ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր (WFP)
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)
ՏՄՈԿ	Տեղական մակարդակում ռիսկերի կառավարում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ

1. Ներածություն

Վերջին տասնամյակներում Հայաստանի տնտեսությանը զգալի վնաս են հասցնում կլիմայի փոփոխության արդյունքում սաստկացած բնակլիմայական վտանգավոր երևույթներն, այդ թվում սելավը, կարկտահարությունը, ուժեղ քամիները, հորդառատ անձրևները, ցրտահարությունը, երաշտը և այլն: Արձագանքելով կլիմայի փոփոխություններով պայմանավորված մարտահրավերներին, նաև հետամուտ լինելով ՄԱԿ-ի կլիմայի շրջանակային կոնվենցիային և Փարիզյան պայմանագրից բխող Հայաստանի պարտավորությունների իրականացմանը, ՀՀ կառավարությունը հանդես է եկել մի շարք իրավական նախաձեռնություններով՝ սահմանելով այդ մարտահրավերներին դիմակայելու ազգային քաղաքականություններն ու ռազմավարական խնդիրները: Այս համատեքստում էական է նշել ՀՀ կառավարության կողմից ընդունված «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին»¹ և «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» որոշումները², որոնցով հաստատվում են մոտակա տարիներին իրականացվելիք անելիքների ուղղվածությունն ու պլաններն ազգային, մարզային և տեղական մակարդակներում: Առանձնահատուկ նշված է կլիմայական ռիսկերի և դրանց դիմակայելուն ուղղված գործողությունների նշանակությունը երկրի, մասնավորապես, համայնքների դիմակայուն զարգացման գործում: Կառավարության կողմից ձեռնարկված քայլերը լայն աջակցության են արժանացել միջազգային հանրության կողմից: Առանձնաբար լուրջ դերակատարում են ունեցել ՄԱԿ-ի գործակալությունները (ՄԱԶԾ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՊԳԾ, ՊՀԾ), միջազգային զարգացման գործակալությունները (ԱՄՆԶԳ, ԱԶԳ, ԳՄՀԸ, ՇԶՀԳ), ֆինանսական կառույցները (ՀԲ, ՎԶԵԲ, ԱԶԲ) և Եվրամիությունը (ԵՄ): Ներկայացված կազմակերպություններից յուրաքանչյուրը տարիների ընթացքում մեծ ներդրումներ է կատարել Հայաստանում, աջակցելով կառավարությանը Հայաստանում կլիմայի փոփոխության հետ կապված քաղաքականությունների մշակման և իրագործման համար՝ ի կատարումն ՄԱԿ-ի կլիմայի շրջանակային կոնվենցիայից և Փարիզյան պայմանագրից բխող Հայաստանի պարտավորությունների, այն է՝ դարձնել Հայաստանը կլիմայի փոփոխությանը դիմակայելու ընդունակ երկիր:

«Կլիմայական ռիսկի գնահատումը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագիրն իրականացվել է Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ) հիմնադրամի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) կողմից, վերջինիս և Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) ֆինանսական աջակցությամբ: Այն իրականացվել է Ծրագրով նախատեսված թիրախային մարզերի խոշորացված համայնքներում: Ծրագրի նպատակն է **օժանդակել Հայաստանում դիմակայուն համայնքների կայացմանն ու զարգացմանը**՝ խթանելով համայնքային բնակչության և ՏԻՄ-երի ակտիվ ներգրավվածությունը համարժեք արձագանքելու կլիմայի փոփոխության ազդեցությանը, ըստ այդման ձեռնարկելով համապատասխան քայլեր համայնքում կլիմայական ռիսկերը նվազեցնելու և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողություններ իրականացնելու համար:

Ծրագիրն իրականացվել է կլիմայական բաղադրիչով հարստացված «Տեղական մակարդակում ռիսկերի կառավարում» (ՏՄՌԿ) մեթոդաբանությամբ, որի կիրառման արդյունավետությունը հաստատվել է Ալավերդի քաղաքում և Թումանյան խոշորացված համայնքում (2021թ.) փորձարկման արդյունքով:

Ծրագրի այս փուլում ներառվել են Հայաստանի հինգ մարզից ընտրված ութ համայնքի 99 բնակավայր (Աղյուսակ 1), որոնցից յուրաքանչյուրում գնահատվել են բնակավայրի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ և սպառնացող կլիմայական ռիսկերը, մշակվել և առաջարկվել են հարմարվողականության ոլորտային լուծումներ:

Աղյուսակ 1. Ծրագրում ընդգրկված մարզեր, համայնքներ և բնակավայրեր

Մարզ	Համայնք	Բնակավայրերի թիվը
Տավուշ	Իջևան	20

¹ ՀՀ կառավարության 22 ապրիլի 2021 թ. N 610-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151985>

² ՀՀ կառավարության 13 մայիսի 2021 թ. N 749-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152612>

	Ստեփանավան	4
Լոռի	Լոռի Բերդ	9
	Գյուլագարակ	7
Շիրակ	Անի	19
Վայոց Ձոր	Վայք	20
	Գորիս	13
Սյունիք	Տեղ	7
Ընդամենը՝	5	8
		99

Քննարկվել են համայնքների հետ, որի արդյունքում սահմանվել է առաջարկված լուծումների գերակայությունը (բնակավայր առ բնակավայր) և այդ լուծումները համայնքային զարգացման պլաններում ներառելու հնարավորություններն ու իրագործման ուղիները:

Ծրագրին առնչվող կազմակերպչական ու նյութատեխնիկական ապահովման հետ կապված հարցերն ու խնդիրները ամբողջությամբ հոգացել է ԱՌՆԱՊ հիմնադրամը:


2. Համայնքի ներկայիս իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի սոցիալ-տնտեսական նկարագիր

Ստեփանավան խոշորացված համայնքը ձևավորվել է 2017թ.: Համայնքի կազմի մեջ են մտնում Ստեփանավան քաղաքը, Արմանիս, Կաթնաղբյուր և Ուրասար գյուղական բնակավայրերը:

Համայնքը տեղադրված է Ձորագետի հովտում, ընդարձակ սարահարթում, ծովի մակերևույթից 1400-1500մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Շրջակայքում կան անտառներ: Համայնքի տարածքով անցնում է Ձորագետ գետը: Ստեփանավանի տարածքում կա նաև 4 արհեստական լիճ և Ուրասար (Ջրաշուշանների) լիճը Ուրասար գյուղում:

Ըստ վիճակագրական Տվյալների, վերջին 5 տարիների ընթացքում բնակչությունը նվազել է մոտ 6,6%-ով:



Բնակչության թվի փոփոխությունը 2017-2022թթ.

Սոցիալական աջակցության հիմնարկները, ֆինանսավարկային, խորհրդատվական, ԱԻ և այլ ծառայությունները տեղակայված են Ստեփանավանում: Կապը համայնքային կենտրոնի և բնակավայրերի միջև իրականացվում է երթուղային միկրոավտոբուսների և տաքսիների միջոցով: Մոտակա երկաթուղային կայարանը գտվում է Վանաձորում, գործող օդանավակայանը՝ Գյումրիում:

Սահմանակից բնակավայրեր	Տաշիր, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Սպիտակ խոշորացված համայնքներ և Շիրակի մարզ	
Բարձրությունը ծովի մակերևույթից		1400-1450 մ
Կլիմա	Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը	683մմ
	Օդի միջին ջերմաստիճանը հունվարին	-4,2°C

	Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին	16,7°C
Ստեփանավան քաղաքի հեռավորությունը	Երևան	157 կմ
	Վանաձոր	36 կմ
	Գյումրի	100 կմ
Բնակավայրերի հեռավորությունը Ստեփանավանից	Արմանիս	5 կմ
	Ուրասար	8 կմ
	Կաթնաղբյուր	18 կմ
Վարչական տարածք	Ընդհանուր մակերեսը (կմ ²), այդ թվում	209,3
	բնակավայրի	0,12
	անտառային	9,3
	գյուղատնտեսական նշանակության	170
	ջրային	4,45
Բնակչություն, սոցիալական կազմ	Բնակչության ընդհանուր թիվը (մարդ)	13348
	Հաշմանդամ	4018
	Թոշակառու	5538
	Նպաստառու ընտանիք	1113
Տրանսպորտային միջոցներ	Բեռնատար մեքենաներ	66
	Տրակտոր	217
	Աղբատար և հատուկ մեքենաներ	5
	Ջրցան մեքենա	2
	Ձյուն մաքրող տեխնիկա	2
	Շինարարական տեխնիկա	11
Ուսումնական հաստատություններ	Մանկապարտեզ	4
	Հիմնական դպրոց	4
	Միջնակարգ դպրոց	3
	Ավագ դպրոց	1
	Վարժարան	1
	Միջին մասնագիտական	2
	Բարձրագույն	1
Հանրային շենք-շինություններ	Մշակույթի տուն	1
	Թանգարան	1
	Գրադարան	1
	Արվեստի դպրոց	1
	Մարզադպրոց	1
Առողջապահական կազմակերպություններ	Հիվանդանոց	1
	Պոլիկլինիկա	1
	Բուժկետ	3

Բնակչության դրամական եկամուտների հիմնական աղբյուրներն են աշխատավարձը, ձեռնարկատիրական գործունեությունը, սոցիալական տրանսֆերտները (թոշակ, նպաստ), բնաիրային եկամուտները, տրանսֆերտները (բնակվող հարազատներից, երեխաների դրամական աջակցությունից) և այլն:

Արմանիս գյուղում Է գտնվում ոսկու բազմամետաղային հանքավայրը:

Հատկապես գյուղական բնակավայրերում գյուղատնտեսությունն ունի առանցքային նշանակություն զբաղվածության և բնակչության եկամուտների, ինչպես նաև տեղական սննդամթերքի մատակարարման մասով: Գյուղերը չեն դասվում գյուղատնտեսական մթերք արտադրող գյուղերի շարքին: Գյուղատնտեսական գործունեությունը ծավալվում է անհատական գյուղացիական տնտեսությունների կողմից: Տնային տնտեսությունների մեծ մասը զբաղված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Անասնապահությունը, հատկապես խոշոր եղջերավոր, գյուղատնտեսական գործունեության հիմնական ճյուղն է: Չբաղվում են նաև մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, խոզաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Դաշտավարության մշակաբույսերն են ցորենը, վարսակը, գարին, կերային կուլտուրաները, կարտոֆիլը: Բանջարաբուծությամբ և այգեգործությամբ զբաղվում են տնամերձերում: Աճեցվող բանջարաբուստանային մշակաբույսերն են՝ կարտոֆիլ, լոբի, վարունգ, գազար, կաղամբ, կանաչի, սոխ, սխտոր և այլն: Պտղագործության արտադրանքներն են խնձորը, տանձը, սալորը, ընկույզը և այլն: Աճեցնում են նաև հատապտուղներ՝ ելակ, ազնվամորի, հաղարջ: Հարակից դաշտերից և անտառներից բնակիչները հավաքում են նաև դեղաբույսեր և ուտելի բույսեր:

Արտադրվող կաթը հավաքում են տարածաշրջանում գործող կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունները: Գյուղմթերքի մի մասը իրացվում է տարածաշրջանի քաղաքային բնակավայրերում կամ փոխանակվում այլ ապրանքատեսակների հետ: Մի մասն էլ բնակիչները վերամշակում են տնային պայմաններում, հիմնականում սեփական օգտագործման, մասամբ էլ վաճառքի կամ փոխանակման համար:

2.2. Մարզին սպառնացող բնածին վտանգավոր երևույթներ և կլիմայի փոփոխության համատեքստում վերջիններիս դրսևորումներում արձանագրված զարգացման միտումներ

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդ է հանրապետությունում, բնակչության թվաքանակով՝ երկրորդը: Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 12,7%: Մարզի տարածքում գերակշռում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%, հանրապետության անտառային ծածկույթի՝ 30%:

Գետերը սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից, ունեն լեռնային արագահոս բնույթ: Մարզում կան բնական և արհեստական լճեր և հանքային աղբյուրներ: Մարզում գործում է 2 ինքնահոս ջրանցք (Լոռու և Նալբանդի):

Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով՝ հիմնականում ինտրազիվ ծագման երեսապատման քարերով, ավազակոպճային խառնուրդով, բազալտներով և մետաղական հանածոներով՝ պղինձ, մոլիբդեն, ոսկի:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերն են գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը: Արագորեն աճում է նաև զբոսաշրջությունը:

Մարզը հանրապետության գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղերն են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը: Վերջին տարիներին զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը: Բուսաբուծության մեջ հիմնական ճյուղերն են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի, բերքատու պտղի և հատապտուղի մշակումը:

Մարզի միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1600-1700մ: ՀՀ Լոռու մարզի տարածքն աչքի է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով և համեմատաբար խոնավ կլիմայով:

Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը -4.8°C -ից մինչև $+18^{\circ}\text{C}$ ամռանը: Տեղումների քանակը կազմում է 600-700մմ:

Քամու տարեկան միջին արագությունը տատանվում է 1.4մ/վ-ից մինչև 3.4մ/վ: Մարզի ամենաքամոտ հատվածը Պուշկինի լեռնանցքն է, որտեղ ձմեռային ամիսներին գերակշռում են հարավային, իսկ ամռանը՝ հյուսիսային քամիները: Միջին տարեկան արագությունն այստեղ

բավական մեծ է և կազմում է 6.3մ/վ, հունվարին հասնելով մինչև 10.3մ/վ: Առավելագույն արագությունը լեռնանցքում կազմում է 43մ/վ, իսկ պռոթկումը՝ 53մ/վ:

Հաճախ դիտվում է բուք՝ տարեկան միջինում 13 օր, իսկ առավելագույնը՝ 28 օր: Բուքով օրերի առավելագույն թիվը մարզի տարածքում կազմում է 30 օր (Տաշիր): Չգալի է ամպամած օրերի թիվը: Առավելագույնը ըստ ընդհանուր ամպամածության դիտվել է Տաշիրում (տարեկան 164 օր): Մառախուղներն առավել հաճախ դիտվում են Պուշկինի լեռնանցքում տարեկան միջինը կազմում է 139 օր, առավելագույնը՝ 203 օր: Հաճախ դիտվում են նաև ամպրոպներ: Տարեկան ամպրոպներով օրերի թիվը կազմում է 50-70 օր, իսկ առավելագույնը՝ 108 օր (Տաշիրում): Ամպրոպները ուղեկցվում են ուժեղ քամիներով, հորդառատ անձրևներով, երբեմն էլ կարկուտով:

Լոռու մարզը գտնվում է բնական աղետների բարձր ռիսկային գոտում և ենթակա է տարբեր վտանգների ազդեցությանը: Դա բացատրվում է մարզի բարդ ռելիեֆով՝ կտրուկ լեռնաշղթաներով, սարահարթերով և խիստ մասնատված բարձրության մեծ տատանումներով:

Բնական վտանգներից մարզը ենթարկվում է ուժեղ երկրաշարժերի, սելավների, գետի վարարումների, հեղեղումների, սողանքների, փլուզումների, քարաթափումների, ցրտահարությունների, երաշտի, կարկտահարության, ուժեղ քամիների, ամպրոպների, անտառային և խոտածածկ տարածքների հրդեհների և այլն:

Երկրաշարժի հետևանքով հնարավոր են բազմաթիվ երկրորդական վտանգավոր երևույթներ փլուզումների, սողանքների, սելավների տեսքով, որոնք իրենց հերթին ստեղծում են լրացուցիչ բազմաթիվ խոցելի գործոններ:

Լոռու մարզում սողանքային երևույթների ազդեցության տակ է գտնվում շուրջ 1900 հա տարածք: Սողանքային երևույթների ակտիվացումը աղետավտանգ պայմաններ է ստեղծում բնակչության համար: Դրա պատճառներն են՝ հոսող ջրերը, ապարների հողմահարումը կամ տեղումներից և գետնաջրերից գերխոնավացումը, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեությունը, երբ հաշվի չեն առնվել տեղանքի երկրաբանական պայմաններն ու անտառահատումը:

Քարաթափումների, փլուզումների, նստվածքային երևույթների առաջացումը հիմնականում կապված է երկրաբանական էկզոգեն պրոցեսների հետ, այդ թվում՝ մթնոլորտային երևույթների ազդեցություն, երկրակեղևի տեկտոնիկ շարժում, անտրոպոգեն գործունեություն, այլ գործոններ, որոնք նպաստում են ապարների քայքայմանը, ջրակալմանը ու լվացմանը և բերում երկրի մակերեսի և վերին շերտերի անկանխատեսելի փոփոխությունների:

Մարզի տարածքում սելավային երևույթները զարգացած են գրեթե ամենուրեք: Մարզի մի շարք փոքր վտակներ սելավաբեր են: Վերջին տասնամյակների սելավների մեծ ակտիվությունը բացատրվում է նաև մարզում անտառային զանգվածների խիստ կրճատմամբ և լեռնալանջերի լերկացմամբ: Սելավները միջին ակտիվության են, ըստ ընդգրկման չափերի լինում են լոկալ, իսկ տևողությամբ՝ կարճաժամկետ:

Ուժեղ սելավաբեր են Բագումի, Գուգարաց, Լավարի և Լեջանի լեռների հարավային և հարավահայաց խիտ և խորը մասնատված, թույլ բուսապատված և չոր լեռնալանջերին տեղաբաշխված գետավազանները: Ձորագետի ավազանի սելավները հիմնականում ցեխաքարային տիպի են, բացի Ուռուտ վտակից, որը ցեխային է: Առավել ակտիվությամբ առանձնանում են Ուռուտ, Ագարակ, Լեջան, Կողես սելավները: Միջին ակտիվություն ունի Գարգառ գետակը, որը սակայն աչքի է ընկնում սելավների մեծ տևողությամբ և ուժգնությամբ:

Հիմնականում, ըստ իրենց պատճառած վնասի և խորտակման տարածքի մարզին բնորոշ են գետերի վարարումներն ու հեղեղումները (5-10 տարին մեկ ջրով ծածկվում են ափամերձ տարածքների 10%-ից ոչ ավելին, նշանակալի նյութական վնասներ և զոհեր չեն լինում): Հորդացումները տեղի են ունենում առավելապես գարնանը և ամռան սկզբին (ապրիլ-հունիս)՝ կապված ձնհալքի և մթնոլորտային առատ տեղումների հետ:

Անտառային հրդեհների հիմնական պատճառը մարդկային գործոնն է՝ հրդեհային անվտանգության կանոնների խախտման հետևանքով: Հրդեհների բռնկման հիմնական պատճառներից է նաև այն հանգամանքը, որ անտառային տարածքներով են անցնում ընդհանուր

օգտագործման ճանապարհներ և արահետներ, ինչպես նաև տեղի են ունենում չոր խոտածածկույթի կանխամտածված հրկիզումներ, որոնց հետևանքով առաջանում են դաշտային և անտառային հրդեհներ: Լինում են դեպքեր, երբ հրդեհն առաջանում է ամպրոպի ժամանակ կայծակի հարվածից:

Հրդեհավտանգ ժամանակահատվածները որպես կանոն սկսվում են անտառածածկ տարածքների ձևածածկույթի հալման պահից մինչև լրիվ կանաչ խոտածածկույթի դուրս գալը կամ աշնան անձրևային եղանակի սկսվելը: Սակայն վերջին տարիների հրդեհների բռնկումներ են գրանցվել տարբեր ժամանակահատվածներում, որը բացատրվում է մարդկային գործոնով: Անտառային հրդեհները հաճախ բռնկվում են հրդեհաշիջման աշխատանքների իրականացման համար դժվարամատչելի և անանցանելի տեղանքներում:

Լոռու մարզին սպառնացող վտանգավոր օդերևութաբանական երևույթներից են կարկտահարությունը, ցրտահարությունը և երաշտը: Կարկուտ առավել հաճախ դիտարկվում է ապրիլ-հունիս ժամանակահատվածում, իսկ խոշոր հատիկներով՝ հուլիս-օգոստոսին: Լոռիում կարկուտները լինում են միջինը տարեկան 6-8 անգամ: Երաշտ սովորաբար արձանագրվում է հուլիս-սեպտեմբեր ժամանակահատվածում, սակայն կարող է տեղի ունենալ նաև զարնանը և աշնանը: Երաշտի հաճախականությունը մոտավոր հաշվարկներով կարող է լինել 2-4 տարին մեկ անգամ: Երաշտները բացասաբար են ազդում բնական Էկոհամակարգերի վրա, խորացնելով անապատացման գործընթացները և նպաստելով երկրորդային աղակալմանը: Մեծ վտանգ են ներկայացնում ուշ զարնանային ցրտահարությունները, երբ մատուցված մշակաբույսերի սածիլները, ծիլերը, բույսերի ծաղիկները վնասվում են բացասական ջերմաստիճանից: Վաղ աշնանային ցրտահարությունները վնասակար են չհավաքված բերքի, ջերմասեր բանաջարաբուստանային կուլտուրաների համար:

Շատ հաճախ վտանգների և վտանգավոր երևույթների ազդեցությունը հանգեցնում է մարդու բնակության միջավայրի որակական փոփոխությունների և շատ դեպքերում՝ աղետալի հետևանքների:

Ըստ վիճակագրական տվյալների 1994-2007թթ. Լոռու մարզում դիտվել է 85 խոշոր հեղեղում, որի տնտեսական վնասը կազմել է 18 մլն ԱՄՆ դոլար:³

Տարերային տարբեր աղետներից (ուժգին կարկտահարություն, հորդառատ անձրևներ, վաղ զարնանային ցրտահարություն և այլն) տուժել են.

1. 2010թ.- մարզի 23 համայնքի շուրջ 1790 հա ցանքատարածություններ և 236 հա պտղատու այգիներ, վնասի չափը կազմել է 507.36 մլն դրամ
2. 2011թ.- մարզի 7 համայնքի շուրջ 991.5 հա ցանքատարածություններ, վնասի չափը կազմել է 457.1 մլն դրամ
3. 2012թ.- մարզի 22 համայնքների շուրջ 1715 հա ցանքատարածություններ և այգիներ, վնասի չափը կազմել է 776.5 մլն դրամ⁴

Համաձայն Կլիմայի փոփոխության մասին 4-րդ ազգային հաղորդագրության⁵, 2015-2017թթ. մարզում տեղի ունեցած բնական աղետալի երևույթներից վնասվել է 2111 հեկտար տարածություն, պատճառելով մոտ 1.5 միլիարդ դրամի վնաս (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. 2015-2017թ.թ. բնական աղետների (կարկտահարություն, հեղեղումներ, ցրտահարություն) հետևանքով վնասված հողատարածքները և վնասի չափը

Մարզ	2015		2016		2017	
	Վնասված տարածք (հա)	Վնասի չափ (հազ. դրամ)	Վնասված տարածք (հա)	Վնասի չափ (հազ. դրամ)	Վնասված տարածք (հա)	Վնասի չափ (հազ. դրամ)


³ Կլիմայական ռիսկերի կառավարումը Հայաստանում՝ երկրի հաշվետվություն. Հայաստան http://www.nature-ic.am/Content/announcements/7296/TASP-Arm_final_2.pdf

⁴ Հայաստանի հանրապետության Լոռու մարզի 2014 - 2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր <http://www.mes.am/files/docs/554.pdf>


⁵ Կլիմայի փոփոխության մասին 4-րդ ազգային հաղորդագրություն, Շրջակա միջավայրի նախարարություն, 2020թ., <http://env.am/storage/files/fnc-arm.pdf>

Ստորև պատկերված են Արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (ՃԿԱԿ) տվյալների հիմքով կառուցված վերջին տասնամյակում Լոռու մարզում գրանցված արտակարգ դեպքերի և դրանց զարգացման միտումների սխեմատիկ պատկերները (Նկարներ 1,2):

Նկար 1. 2012-2021 թվականներին Լոռու մարզում գրանցված բնածին վտանգներից առաջացած արտակարգ դեպքերի վիճակագրության հանրագումարն ըստ տարիների



Նկար 2. 2012-2021 թվականներին Լոռու մարզում գրանցված արտակարգ դեպքերի վիճակագրությունից բխող առանձին վտանգների զարգացման միտումներ



Նկար 1-ից երևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում մարզում գրանցված արտակարգ դեպքերի հիմնական պատճառ են հանդիսանում հիդրոոչերևութաբանական վտանգները և դրանց ազդեցությամբ պայմանավորված երկրաբանական վտանգավոր երևույթները (սելավ, սողանք, քարաթափում): Նման երևույթների առկայությունը համահունչ է Հայաստանում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված կանխատեսվող փոփոխությունների ընդհանուր միտումներին, որոնք ներկայացված են Հայաստանին վերաբերվող տեղական և միջազգային բազմաթիվ ուսումնասիրություններում: Ավելին, պատկերից պարզ է դառնում, որ նախ, այդ ժամանակահատվածում արտակարգ դեպքերի թիվը աճել է և երկրորդ, որ արտակարգ դեպքերով առավել հարուստ են եղել 2015 և 2016 թվականները (2013 թվականի նկատմամբ դեպքերի թիվն աճել է մոտ 2 անգամ): Թեպետ, մնացած տարիներին նույնպես տեղի ունեցած դեպքերի թիվը գերազանցում է 2013 թվականի ցուցանիշը:

Նկար 2-ից պարզ է դառնում, որ մարզում զգալի ավելացել է քարաթափումների, սելավների և ուժեղ քամիների քանակը: Հարաբերական աճ է գրանցվել հեղեղումների պարագայում, կարկուտները և ձնաբուքերը ինչ որ չափով նվազել են, իսկ կայծակներն ու սողանքները (փլուզումները) գրեթե չեն փոխվել: Նկարներ 1-ում և 2-ում պատկերված գրաֆիկների տվյալները բերված են համապատասխան հավելվածներում (Հավելվածներ 1,2):

Հայաստանն իր ամբողջ տարածքով և խոցելի Էկոհամակարգերով համարվում է կլիմայի փոփոխության նկատմամբ առավել զգայուն երկիր: Վերջին տարիներին ոչ միայն գրանցվել է օդի ջերմաստիճանի աճ և մթնոլորտային տեղումների նվազում, զգալիորեն ավելացել են նաև էքստրեմալ եղանակային երևույթների և դրանց հետևանքով առաջ եկող բնական վտանգավոր երևույթների (սելավներ, հեղեղումներ, անտառային հրդեհներ և այլն) հաճախականությունը և ինտենսիվությունը, որոնք բացասական ազդեցություն են թողնում Էկոհամակարգերի, տնտեսության, մարդկանց գործունեության և առողջության վրա:⁶


Հարկ է նշել, որ մարզի մակարդակով բերված հիդրոոչերևութաբանական վտանգավոր երևույթների (ՀՎԵ) ժամանակագրական պատկերն ու դրանց դրսևորումների փոփոխություններում նկատվող միտումները ներկայացնում են մարզի վտանգներին ենթարկվածության ընդհանուր վիճակը, ինչը չի նշանակում, որ նույն պատկերն է տիրում

⁶ Կլիմայի փոփոխության մասին 4-րդ ազգային հաղորդագրություն, Շրջակա միջավայրի նախարարություն, 2020թ., <http://env.am/storage/files/fnc-arm.pdf>

առանձին վերցված համայնքներում: Իրականում, մարզի համայնքներում և բնակավայրերում առանձին վտանգների մասով միտումները կարող են տրամագծորեն տարբերվել, հաշվի առնելով բնակավայրի ռելիեֆի և ծովի մակերևույթից բարձրության առանձնահատկությունները:

2.3. Համայնքի կլիմայական պատկերը և վերջին տասնհինգ տարիներին համայնքում տեղի ունեցած արտակարգ դեպքեր


Լոռու մարզի Ստեփանավան, Լոռի Բերդ և Գյուլագարակ համայնքների կազմում ներառված է թվով 20 բնակավայր (Նկար 4): Բնակավայրերը հիմնականում տեղակայված են ծովի մակերևույթից 1000-1500 մետր բարձրության վրա, սակայն կան 1500 մետրից բարձր գտնվող բնակավայրեր (Սվերդլով, Կաթնաղբյուր, Արմանիս): Լոռու մարզի համայնքների կլիմայական պայմանների վերլուծության համար ընտրվել են Ստեփանավանի (1367 մետր) և Տաշիրի (1507 մետր) օդերևութաբանական կայանները, որոնք բնութագրական են Լոռու դաշտի համեմատաբար ցածրադիր և բարձրադիր գոտիների համար: Ուստի, Ստեփանավանի օդերևութաբանական կայանի դիտարկումները կարելի է կիրառել բնակավայրերի մեծ մասի համար, իսկ համեմատաբար բարձրադիր բնակավայրերի համար՝ Սվերդլով, Կաթնաղբյուր, Արմանիս, պետք է կողմնորոշվել Տաշիրի օդերևութաբանական կայանի դիտարկումներով: Ընդհանուր առմամբ 3 համայնք գտնվում է բարեխառն կլիմայական գոտում, որոնք բնութագրվում են համեմատաբար խոնավ պայմաններով տարվա բոլոր եղանակներին (Հայաստանի ջրային ռեսուրսների ատլաս, 2008թ.):




Նկար 4. Լոռու մարզի ռելիեֆը, Ստեփանավան, Լոռի-Բերդ և Գյուլագարակ համայնքների բնակավայրերը, Ստեփանավանի և Տաշիրի օդերևութաբանական կայանները

Օդի տարեկան ջերմաստիճանի նորման տատանվում է 5,9 °C-ից 7,0 °C, որը տաքացել է 0,9 °C-ից 1,1 °C-ով վերջին տասնամյակում (Աղյուսակ 2, Նկար 5): Տեղումների քանակի տարեկան նորման կազմում է 692-694 մմ, սակայն վերջին տասնամյակում տեղումների քանակը նվազել է Ստեփանավանում (631 մմ), իսկ Տաշիրում աճել է (769 մմ): Տեղումների քանակի փոփոխման տարբեր միտումները Լոռու մարզում կարող է պայմանավորված լինել լեռնային ռելիեֆի ազդեցությամբ, սակայն հետագա ուսումնասիրությունների կարիք կա: Զամու միջին տարեկան արագությունը տատանվում է 1,6 մ/վ-ից մինչև 2,0 մ/վ, իսկ վերջին տասնամյակում՝ 1,9 մ/վ-ից 2,1 մ/վ:

ա) Ստեփանավան



բ) Տաշիր



Նկար 5. Տարեկան օդի ջերմաստիճանի (գիծ) և տեղումների քանակի (սյուներով) միջին արժեքները Ստեփանավանի և Տաշիրի օդերևութաբանական կայաններում 1961-1990թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում

Լուռու մարզի համայնքների համար երաշտը նույնպես համարվում է ամենահաճախ դիտվող վտանգավոր երևույթը՝ միջինը տարեկան 12 օր (Աղյուսակ 4,5 Նկար 6ա,6բ): Առանձին տարիներին երաշտով օրերի թիվը կարող է հասնել մինչև 41-51 օրվա: Չնայած տեղումների նվազման և օդի ջերմաստիճանի աճին Ստեփանավանում երաշտներով օրերի միջին տարեկան թիվը չի փոխվել վերջին տասնամյակում, այնինչ օդի ջերմաստիճանի բարձրացումը բերել է երաշտներով օրերի թվի աճին Տաշիրում՝ 7 օրից (1961-1990 թթ.) մինչև 12 օր (2011-2020 թթ.): Լուռու մարզի համայնքներում ևս ամենից հաճախակի դիտվող երկրորդ վտանգավոր երևույթը ցրտահարությունն է՝ միջինում տարեկան 5-6 օր: Պետք է նշել, որ վերջին տասնամյակում հատկապես նվազել են աշնանային ցրտահարությունները (Աղյուսակ 4,5):


Աղյուսակ 4. Հվե-ների առավելագույն և միջին տարեկան օրերի քանակը Ստեփանավանի օդերևութաբանական կայանում 1961-1990թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում

Հվե-ի տեսակը	1961-1990		2011-2020	
	Առավելագույն	միջին	Առավելագույն	միջին
Կարկուտ	12	2.6	4	1.7
Վտանգավոր քամի (≥ 25մ/վ)	11	1.2	5	1
Ուժեղ անձրև (≥ 30 մմ 12 ժամում)	2	0.3	2	0.7
Սաստիկ շոգ (≥ 35 °C)	1	0.0	1	0.1
Հաջորդական չոր օրերի տևողություն	89	32.8	44	29.4
	Գարուն			
	5	3.4	5	3.3
Ցրտահարություն	Աշուն			
	5	2.8	3	1.9
Երաշտ	51	12	41	12.4


Աղյուսակ 5. Հվե-ների առավելագույն և միջին տարեկան օրերի քանակը Տաշիրի օդերևութաբանական կայանում 1961-1990թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում

Հվե-ի տեսակը	1961-1990		2011-2020	
	Առավելագույն	միջին	Առավելագույն	միջին
Կարկուտ	11	1.2	5	1
Վտանգավոր քամի (≥ 25մ/վ)	7	1.2	2	0.3
Ուժեղ անձրև (≥ 30 մմ 12 ժամում)	7	1.0	2	0.7
Սաստիկ շոգ (≥ 35 °C)	0	0.0	0	0
Հաջորդական չոր օրերի տևողություն	60	30.9	46	27.9
	Գարուն			
	5	3	4	3
Ցրտահարություն	Աշուն			
	5	3	3	2.4
Երաշտ	41	7	41	12.3

ա) Ստեփանավան



բ) Տաշիր



Նկար 6. ՀՎԵ-ների միջին տարեկան օրերի քանակը Ստեփանավանի (ա) և Տաշիրի (բ) օդերևութաբանական կայաններում 1961-1990թթ. (կապույտ) և 2011-2020թթ. (կարմիր) ժամանակահատվածներում



Կարկուտներն, ուժեղ քամիները և անձրևները համեմատաբար հազվադեպ են դիտվում Լոռու մարզի ընտրված օդերևութաբանական կայաններում: Այնուամենայնիվ առանձին տարիներին այս երևույթների հաճախականությունը եղել է զգալի՝ հասնելով մինչև 7–12 օր/տարեկան: Հիմնականում այս ՀՎԵ-ները նվազել են 2011-2020թթ. ժամանակահատվածում: Պետք է նշել որ այս երևույթներն իրարից անկախ չեն և հաճախ ուղեկցվում են մեկը մյուսով: Սաստիկ շոգեր գրեթե չեն դիտվել:

Ամփոփում:



- Լոռու մարզի 3 համայնքի բնակավայրերի մեծ մասը առավել խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ, քանի որ այստեղ վերջին տասնամյակում միջին տարեկան ջերմաստիճանի աճին զուգընթաց նվազել է տեղումների քանակն ըստ Ստեփանավանի օդերևութաբանական կայանի դիտարկումների:
- Երաշտները համարվում են հիմնական կլիմայական ռիսկը Լոռու մարզի համայնքների համար, քանի որ դրանց օրերի միջին տարեկան թիվը զգալիորեն ավելի է մնացած ՀՎԵ ների համեմատ: Երաշտներով օրերի թիվը ավելացել է վերջին տասնամյակում միայն ավելի բարձրադիր Տաշիրի օդերևութաբանական կայանում: Այնուամենայնիվ, հաջորդական չոր օրերի միջին տևողությունը կրճատվել է 2011-2020թթ. ժամանակահատվածում և Ստեփանավանի և Տաշիրի օդերևութաբանական կայաններում:
- Երկրորդ կլիմայական ռիսկը՝ ցրտահարությունն է: Վերջին տասնամյակում ցրտահարությունները նվազել են կլիմայի տաքացման հետևանքով:
- Կարկուտներն, ուժեղ անձրևները և վտանգավոր քամիները համեմատաբար ցածր կրկնելիություն ունեն: Վերջին տասնամյակում դիտվել է կարկուտների (Ստեփանավանի օդերևութաբանական կայան) և ուժեղ քամիների (Տաշիրի բարձրադիր օդերևութաբանական կայան) նվազման միտում:
- Սաստիկ շոգեր երբևիցե չեն դիտվել Տաշիրի օդերևութաբանական կայանում, իսկ Ստեփանավանի կայանում դիտվել է ընդամենը մեկ դեպք 1961-1990թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում:

Համադրելու համար ստորև ներկայացված է ՃԿԱԿ-ի տվյալների վրա հիմնված վերջին 15 տարիներին Ստեփանավան համայնքում տեղի ունեցած տարերային երևույթների վիճակագրությունն ըստ տարիների և բնակավայրերի (Նկար 5, 6):

Նկար 5. Ստեփանավան համայնքի մակարդակում վերջին 15 տարիների ընթացքում գրանցված արտակարգ դեպքերի/տարերային երևույթների հանրագումարն ըստ բնակավայրերի



Նկար 6. Ստեփանավան համայնքի մակարդակում վերջին 15 տարիների ընթացքում գրանցված տարերային երևույթների հանրագումարն ըստ տարիների



Նկար 5-ից պարզ երևում է, որ համայնքի ամենավտանգված բնակավայրը Ստեփանավան քաղաքն է, որտեղ գրանցվել են գրեթե բոլոր դիտարկվող երևույթները:

Նկար 6-ը արձանագրում է, որ գրեթե 5 տարին մեկ համայնքը ենթարկվում է տարերային երևույթների բացասական ազդեցության, ինչպես նաև երևում է որոշ երևույթների աճման

միտում՝ ավելի հաճախակի են դարձել ուժեղ քամիներն, առատ տեղումները ձյան և կարկուտի տեսքով: Պատկերված գրաֆիկների տվյալները կցվում են (Հավելված 3):

Ներկայումս համայնքին սպառնացող վտանգների և դրանց հետագա հնարավոր դրսևորումների վերաբերյալ ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համար ծրագրային թիմը վերը բերված բոլոր տվյալները համադրել է ՏՄՌԿ գործիքակազմով տեղում հավաքագրված տվյալների հետ: Արդյունքում, գնահատվել է յուրաքանչյուր վտանգի ապագայում կայանալու հավանականությունը, ինչը հիմք է հանդիսացել այդ վտանգների նկատմամբ համայնքի խոցելիությունը և ռիսկը սահմանելու համար (Հավելված 4):

2.4. Համայնքի ֆինանսական միջոցներ

Կլիմայական ռիսկերին դիմակայելու համայնքում նախատեսվող/ձեռնարկվող նախաձեռնությունների ֆինանսական ապահովման վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով Ծրագրի սահմաններում իրականացվել է Ստեփանավան համայնքի բյուջեի՝ եկամտային և ծախսային մասերի վերլուծություն:

Ստեփանավան համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի վերլուծության համար օգտագործվել են ՀՀ Լոռվա մարզի պաշտոնական էջում հրապարակված տվյալները⁷: (Հավելված 5); Վերլուծությունը իրականացվել է 2020-2022թթ. բյուջեների պլանային ցուցանիշների հիման վրա:

Եկամուտների մասով Ստեփանավան համայնքի 2020թ. համար նախատեսվել էր 571,282.9 հազար դրամ, որից 511,822.9 հազար դրամը վարչական մասում, իսկ 59,460.0 հազար դրամը ֆոնդային մասում: 2021թ. եկամուտները պլանավորվել են 782,399.8 հազար դրամ, որից 612,527.6 հազար դրամը՝ վարչական մասի եկամուտներ, իսկ 287,054.3 հազար դրամը՝ ֆոնդային մասի եկամուտներ⁸: 2022թ. համար բյուջեով նախատեսվել է 1,502,686.5 հազար դրամ, որից 668,148.4 հազար դրամը վարչական մասում, իսկ 890,281.4 հազար դրամը՝ ֆոնդային մասում:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ համայնքի եկամուտների գերակշիռ մասը, մոտ 75% ձևավորվում են պետության կողմից համայնքին տրամադրվող դրամաշնորհների, այդ թվում՝ կապիտալ ներքին դրամաշնորհների հաշվին: Համայնքի սեփական եկամուտների տեսակարար կշիռը դիտարկված տարիների ընթացքում ունի նվազող միտում, ինչը հիմնականում պայմանավորված է պետության կողմից հատկացվող գումարների աճով:

Համայնքի բյուջեի ծախսերի մասով դիտարկվել են 2020-2022թթ. ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ: Ծախսերի գործառնական դասակարգումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական գործառնությունների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է: Ընդհանուր առմամբ, համայնքի 2020թ. ծախսերը կազմել են 647,919.8 հազար դրամ, որից 516,150.7 հազար դրամը պլանավորվել են վարչական մասի ծախս, իսկ 131,769.1 հազար դրամը՝ ֆոնդային մասի ծախս: 2021թ. համար այս ցուցանիշը պլանավորվել է 870,558.2 հազար դրամ, որից 617,700.4 հազար դրամ՝ վարչական, 370,039.9 հազար դրամ ֆոնդային մասի եկամուտ: 2022թ. համար ընդհանուր ծախսերը պլանավորվել են 1,607,142.4 հազար դրամի չափով, որից 672,399.1 հազար դրամ վարչական, իսկ 990,486.7 հազար դրամը ֆոնդային մասերում:

Վերլուծելով աղյուսակում բերված տվյալները կարելի է փաստել, որ Ստեփանավան համայնքի բյուջեն դիտարկված տարիներին զգալի աճել է, առաջին հերթին, ֆոնդային մասի աճի հաշվին: Եթե 2020թ. բյուջեի ֆոնդային մասը կազմում էր ընդամենը մոտ 20%, ապա 2022թ. այդ ցուցանիշը 62% է: Սակայն, ինչպես նշվել էր եկամուտների մասում, աճը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհների հաշվին, որոնք ուղղվել են մշակութային, կրթական, տրանսպորտային և բնակարանային ենթակառուցվածքների կառուցման և վերանորոգման համար: Ծախսային մյուս հոդվածների մասով գրեթե պահպանվում են միջին հանրապետական ցուցանիշները, որտեղ բարձր տեսակարար կշիռ են կազմում համայնքապետարանի պահպանման ծախսերը և կրթության ծախսերը: Որպես համայնքի բյուջեի առանձնահատկություն կարելի է նշել, տարեսկզբի ազատ մնացորդը, որը բավականին զգալի գումար է (2020թ.՝ 76,204.4 հազար դրամ, 2021թ.՝ 88,158.3 հազար դրամ, 2022թ.՝ 104,455.9 հազար դրամ):

⁷ <http://lori.mtad.am/community-budgetary-revenues/> և <http://lori.mtad.am/community-budgetary-expenditure/>

⁸ Ներառված են նաև վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը

3. Ծրագրի իրականացման գործընթաց

3.1. Մեթոդաբանություն

ՏՄՌԿ մեթոդաբանության հիմքում ընկած է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի /ԿԻԿՄՄՖ/ կողմից մշակված տեղական մակարդակում աղետների ռիսկի բացահայտման, համայնքին սպառնացող վտանգների, այդ վտանգների նկատմամբ վերջինիս խոցելիության և կարողությունների գնահատման (ԽԿԳ) գործիքը: Այն մշակվել է, մասնավորապես, գյուղական համայնքներում կիրառելու նպատակով: ԽԿԳ գործիքով իրականացված ուսումնասիրությունները, հիմնականում, առաջին մոտավորությամբ տալիս են համայնքին սպառնացող ռիսկերի ընդհանուր պատկերը՝ դրանք ճանաչելի և հասանելի դարձնելով համայնքի բնակչությանն ու ղեկավարությանը: ԽԿԳ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ձևավորվում է փաստացի տվյալների հավաքագրման արդյունքում առաջնային և երկրորդային աղբյուրներից, ներառյալ վիճակագրությունը, և չի ենթադրում որևէ խորացված մասնագիտական հետազոտություն:

ԽԿԳ գործիքը դասվում է տեղական մակարդակում ռիսկերի գնահատման միջազգայնորեն ճանաչված լավագույն գործիքների շարքին:

Ի տարբերություն ԽԿԳ-ի, ՏՄՌԿ-ն ոչ միայն գնահատման, այլ նաև պլանավորման մեթոդաբանություն է: Այն թույլ է տալիս գնահատել աղետների ռիսկերը ԽԿԳ գործիքակազմի օգտագործմամբ, ինչպես նաև մեխանիզմներ է պարունակում դրանց դիմակայելու հնարավոր գործողությունները փոխադարձ համադրելու և պլանավորելու համար, ելնելով

- ռիսկային առաջնահերթությունից,
- ֆինանսական, կյուրատեխնիկական և մարդկային ռեսուրսների առկայությունից,
- լուծումների հնարավոր փոխադարձ ազդեցությունից և
- համայնքում զարգացման պլաններով նախատեսված գործողությունների հետ ունեցած առնչությունից՝ փոխազդեցության և համապատասխանելիության առումով:

ՏՄՌԿ գործընթացը հաջորդականորեն իրականացվող քայլերի համակցություն է՝ բաղկացած հետևյալ փուլերից.

- նախապատրաստական,
- տվյալների հավաքագրման և ճշգրտման
- վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատման և, դրանց վերլուծության արդյունքում, յուրաքանչյուր վտանգի ռիսկայնության վերաբերյալ եզրակացությունների ձևավորման,
- բացահայտված ռիսկերին դիմակայելու համապատասխան գործողությունների մշակման և պլանավորման:

ՏՄՌԿ մեթոդաբանությունը, սկզբնական տարբերակում, բավարար հնարավորություն չէր ընձեռում կլիմայի փոփոխության պատճառով առաջացած նոր ռիսկերը բացահայտելու և դրանց դիմակայմանն ուղղված համահունչ քայլեր ձեռնարկելու համար: Մեթոդաբանությունը լավարկելու նպատակով ուսումնասիրվել է միջազգային փորձը, մասնավորապես, կլիմայական ռիսկերի գնահատման գոյություն ունեցող արդի մոտեցումները և վերջիններիս, տեղական մակարդակում կիրառելիության առումով, ավելի դյուրին ճանաչված ռիսկերի բացահայտման և գնահատման գործիքները: Ուսումնասիրությունների արդյունքում նախապատվությունը տրվել է նույն ԿԻԿՄՄՖ ԽԿԳ գործիքի կլիմայական բաղադրիչով հարստացված տարբերակին, որը ստեղծվել է 2007-2012թթ.: ԽԿԳ նոր տարբերակում մի շարք գործիքներ ենթարկվել են կառուցվածքային փոփոխությունների, ներառելով բաղկացուցիչներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել կլիմայի փոփոխության պատճառով համայնքում առաջացող հավելյալ խնդիրների մասին: Ի տարբերություն այն բնական վտանգավոր երևույթների, որոնք կարող են հանկարծապես աղետի պատճառ հանդիսանալ, կլիմայի փոփոխությունը դանդաղ ընթացող վտանգավոր երևույթ է: Այն աստիճանաբար, ժամանակի ընթացքում է բերում աղետալի հետևանքների, ինչը հաճախ տեղի է ունենում տարբեր վտանգների համակցության արդյունքում: Հայտնի է, որ կլիմայի փոփոխության ազդեցությունը արտահայտվում է հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բնութագրերի փոփոխությամբ՝ մեծացնելով վերջիններիս կայացման հաճախականությունն ու ուժգնությունը, կամ առաջացնելով եղանակային ծայրահեղ դրսևորումներ ու տատանումներ: Կլիմայով պայմանավորված նման երևույթներից առաջացած ռիսկերը բացահայտելու նպատակով է, որ ՏՄՌԿ ներկայիս մեթոդաբանության մեջ օգտագործել է ԽԿԳ գործիքի կլիմայական բաղադրիչով հարստացված տարբերակը:

3.2. Աշխատանքների ամփոփ նկարագիր

Ռիսկերի գնահատման աշխատանքները համայնքում իրականացվել են ՏՄՌԿ մեթոդաբանության չորս փուլով նախատեսված գործողությունների լիարժեք իրականացմամբ՝

այցելելով և ուսումնասիրելով համայնքի բոլոր բնակավայրերը: Մինչ այցելությունները և բուն ուսումնասիրության ընթացքում ծրագրային թիմի և ԱՌՆԱՊ հիմնադրամի ադմինիստրացիայի կողմից ծավալուն աշխատանքներ են տարվել ուսումնասիրության հետ կապված անելիքների պլանավորման, տեղական մարմիններին տեղեկացնելու և աշխատանքները տեղերում կազմակերպելու, տեղական թիմեր ձևավորելու և ուսուցման, տեխնիկական և կազմակերպչական բազում այլ հարցերի կարգավորման ուղղությամբ:

1. Նախապատրաստական փուլ

Ծրագրային թիմի կողմից մշակվել է Ծրագրի իրականացման գործողությունների պլանը, ինչպես նաև ձևավորվել են վերջինիս հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Կազմակերպվել են հանդիպումներ բոլոր շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում Շրջակա միջավայրի, Արտակարգ իրավիճակների, Տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարությունների ներկայացուցիչների և թիրախային մարզերի իշխանությունների հետ: Ներկայացվել են Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները, Ծրագրի իրականացման գործողությունների պլանն ու համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության սկզբունքները՝ ներառյալ համապատասխան մարմինների ներգրավվածության և ծրագրին օժանդակություն ցուցաբերելու ակնկալիքները, մասնավորապես, տեղական թիմերի ձևավորման համար թեկնածուների առաջադրման և ընտրության հարցում: Մշակվել են տեղական թիմերի ուսուցման դասընթացների կյուրթերը: Լրամշակվել են ՏՄՌԿ մեթոդաբանության գործիքակազմի տվյալների հավաքագրման համար անհրաժեշտ գործիքները՝ հարմարեցնելով վերջիններս Ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմանը: Դասընթացները կազմակերպվել են Ծրագրի հինգ թիրախային մարզում օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում: Դասընթացների ավարտին ընդհանուր մասնակիցների կազմից ընտրվել են տեղական թիմերի անդամները:

2. Տվյալների հավաքագրման փուլ

Տեղական թիմերի կողմից համայնքներում տվյալների հավաքագրման աշխատանքներն իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի, բացառությամբ այն համայնքների, որտեղ աշխատանքներն, անվտանգության նկատառումներով, ժամանակավորապես հետաձգվել էին սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների պատճառով: Աշխատանքային պլանից եղել են նաև այլ ժամանակային շեղումներ՝ կապված անբարենպաստ եղանակային պայմանների հետ, որը սեզոնային գործոն է և վերաբերվում է այն բնակավայրերին, որոնց հասանելիությունը անձրևային օրերին և դրանցից հետո դառնում է խնդրահարույց:

Տվյալների հավաքագրման աշխատանքներում, ներառյալ մշակումն ու թվայնացումը, բացի տեղական թիմերի անդամներից ներգրավված են եղել նաև վերլուծական թիմի անդամներն ու Ծրագրի փորձագետները, որոնք համակարգել, ուղղորդել և, ըստ անհրաժեշտության, տրամադրել են մասնագիտական աջակցություն տեղական թիմերին: Չուզահեռաբար, հավաքագրված տվյալների վերլուծության վրա աշխատել են նաև վերլուծական թիմի անդամները:

Ծրագրի իրականացման աշխատանքային պլանի համաձայն ս.թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 20-ը անց է կացվել տեղական թիմերի գործունեության մոնիթորինգ: Այդ նպատակով մարզային պատասխանատուների մասնակցությամբ Ծրագրի ղեկավարությունը այցելել է թիրախային հինգ մարզում տեղակայված քաղաքային մեկական բնակավայր: Մոնիթորինգի արդյունքում առանձին ուշադրություն է դարձվել տեղական թիմերի կողմից տվյալների հավաքագրման գործիքակազմի կիրառման առանձնահատկությունների հետ կապված հարցերին և արձանագրված խոչընդոտների վերլուծությանը, ինչպես նաև հետագա անելիքներում հնարավոր խնդիրներից խուսափելուն ուղղված քայլերին: Այցելությունների ընթացքում վերհանված խնդիրները քննարկվել են թիմերի անդամների հետ և առաջարկություններ են արվել թիմերի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ծրագրային թիմը, անմիջապես մասնակցելով տվյալների հավաքագրման գործընթացին, թիմերին գործնական օժանդակություն է ցուցաբերել գործիքների կիրառման նրբություններն ավելի խորը հասկանալու և արդյունավետ կիրառելու նպատակով: Ի աջակցություն տեղական թիմերի և ի նպաստ թիմերի ու տեղական ղեկավարության համագործակցության սերտացմանը, ծրագրային թիմը մասնակցել է նաև համայնքային հանդիպումներին:

Լոռվա տեղական թիմի մոնիթորինգի հետ համատեղ անց է կացվել նաև վերլուծական թիմի արտագնա աշխատանքային հանդիպում:

Մոնիթորինգի պլանավորման, այցելությունների հետ կապված տեխնիկական հարցերի, տեղական իշխանության տեղեկացման և ներգրավվածության հետ կապված բոլոր

աշխատանքներն անց են կացվել Ծրագրի ղեկավար կազմի, վերլուծաբանների խմբի, տեղական թիմերի համակարգողների և ԱՌՆԱՊ տնօրինության անմիջական մասնակցությամբ:

3. Տվյալների վերլուծության ու ռիսկերի գնահատման փուլ

Այս փուլի աշխատանքներում ներգրավված են եղել Ծրագրի փորձագետներն ու վերլուծական թիմը: Թիմի մարզային պատասխանատու վերլուծաբաններն իրականացրել են բազմակողմանի վերլուծություն. ուսումնասիրել, տեսակավորել և ճշգրտել են տեղական թիմերի ներկայացված տվյալները՝ համադրելով տարբեր գործիքներով ստացված առաջնային տվյալները երկրորդային աղբյուրներից քաղված տվյալների, ինչպես նաև Ծրագրի փորձագետների մասնագիտական գնահատականների հետ: Վերլուծության արդյունքում բացահայտվել են կլիմայի փոփոխության հետ կապված համայնքին (բնակավայր առ բնակավայր) սպառնացող գերակա վտանգներն ու կլիմայական ռիսկերը: Այդ աշխատանքների ընթացքում վերլուծական թիմը մշտական կապի մեջ է եղել տեղական թիմերի հետ՝ առանձին դեպքերում տվյալների իսկությունը ճշտելու համար:

Ծրագրի համակարգողների կողմից մշակվել և տրամադրվել են ռիսկի և ռիսկի առանձին բաղադրիչների բացահայտման և գնահատման ստանդարտ ձևանմուշներ՝ քանակական և որակական տվյալների վերլուծություններում միասնական հայեցակարգային մոտեցումներ ցուցաբերելու համար: Վերլուծական աշխատանքներն իրականացնելու ընթացքում համակարգողների կողմից պարբերաբար անց են կացվել առցանց և առերես հանդիպումներ՝ որոնք նպաստել են վերլուծական աշխատանքների սահուն գործընթացի ապահովմանը: Բացահայտված ռիսկերի հիման վրա վերլուծական թիմերի կողմից առաջարկություններ են արվել համայնքում կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտային լուծումների վերաբերյալ:

4. Արդյունքների ամփոփման և ներկայացման փուլ

Հատուկ մշակված ձևանմուշով կազմվել է աշխատանքային հաշվետվություն, որտեղ ներկայացվել են թիրախային համայնքների և բնակավայրերի ռիսկերի գնահատմանն ու հարմարվողականության լուծումներին վերաբերող արդյունքներն ու ձեռքբերումները: Համաձայն նախնական պայմանավորվածության դրանք ներկայացվել և քննարկվել են բոլոր թիրախային համայնքներում ու բնակավայրերում՝ նպատակ ունենալով հնարավորություն ընձեռել համայնքին ու համայնքի ղեկավարությանը առաջարկվող լուծումների բազմությունից ընտրել իրենց համար առաջնահերթ և տեսանելի լուծումները: Համայնքի կողմից ընտրությունը կատարելուց հետո առանձին քննարկվել են համայնքի ռազմավարական պլանում ընտրված լուծումների ինտեգրման հնարավորությունները: Հիմնվելով համայնքում կայացված որոշումների վրա, ծրագրային թիմը վերանայել, ճշգրտել և մշակել է ծրագրային հաշվետվության վերջնական տարբերակը: Այն ներկայացվել է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպված ընդհանուր հավաքին: Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է Ծրագրի հետ առնչվող նախարարություններին, թիրախային մարզերի և համայնքների ղեկավարությանը, բնակավայրերի վարչական ղեկավարներին ու Ծրագրի դնորներին:

3.3. Տվյալների հավաքագրման գործիքակազմ և համայնքում առանձին գործիքների կիրառման հետ կապված առանձնահատկություններ

Ինչպես արդեն նշվել է, համայնքում աղետների և կլիմայական ռիսկերի բացահայտման և գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման նպատակով օգտագործվել է ՏՄՌԿ մեթոդաբանության ԽԿԳ կլիմայի բաղադրիչով հարստացված գործիքների հավաքածուն: Ստորև նկարագրված է նշված գործիքներից յուրաքանչյուրի ներդրումը տվյալների հավաքագրման գործում, նաև տեղեղում վերջիններիս կիրառման հետ կապված առանձին մանրամասներ և առանձնահատկություններ:

▪ Երկրորդային աղբյուրների տվյալների հավաքագրում

Այս աղբյուրներից հավաքված տվյալները տրամադրում են նախնական տեղեկատվություն համայնքի և վերջինիս ցարգացման պլանների մասին: Մասնավորապես դրանք կարող են լինել ՀՀ կառավարության որոշումներ, պետական կառույցների (նախարարություններ, ազգային վիճակագրական ծառայություն, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական մարմիններ) կողմից հրապարակված պաշտոնական հաշվետվություններ, զեկույցներ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների համայնքում իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվություններ, հետազոտություններ, զեկույցներ, ՉԼՄ-ների կողմից հրապարակված նյութեր և այլն: Համայնքի զարգացման պլանների և ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ունենալը մեծապես կարող է նպաստել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների հետագա մշակման և պլանավորման գործընթացին: Կարևորվում է նաև համայնքի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրումը:

Ստեփանավան համայնքի վերաբերյալ երկրորդային աղբյուրների տվյալները և տեղեկությունները հավաքագրվել են Լոռու մարզպետարանի և Ստեփանավան համայնքի պաշտոնական կայքերից, Ստեփանավանի համայնքապետարանից (զարգացման պլաններ), ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարար վարչությունից, մարզի, համայնքի և բնակավայրերի հաշվետվություններից, ՀՀ կառավարությանն առնաթեր Կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքից, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքից, տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրային զեկույցներից, տարբեր կազմակերպությունների կողմից կազմված Կլիմայի փոփոխության մասին զեկույցներից և հաղորդագրություններից, այլ աղբյուրներից:

Երկրորդային աղբյուրներից տվյալների հավաքագրումը լիարժեքորեն կիրառելի է գյուղական բնակավայրերի համար, սակայն դժվար կիրառելի է ենթակառուցվածքներով հարուստ, ոլորտային կառավարման տարրեր ունեցող քաղաքների համար՝ հատկապես ժամանակի սղության պատճառով: Երկրորդային տվյալների հավաքագրումը ավելի դյուրին է, երբ համայնքային կառավարման մարմիններն ու կառույցները տեղյակ են գործընթացից և կարևորում են այն համայնքի զարգացման համար:

Հարկ է նշել, որ տեղական մակարդակում որոշ տվյալներ թերի են կամ բացակայում են, կլիմայի կամ կլիմայական վտանգներից հասցված վնասի վերաբերյալ տեղեկում տվյալներ գրեթե չկան: Տեղական մակարդակում կլիմայի և կլիմայական փոփոխությունների հետ կապված տվյալների և հետազոտությունների բացակայությունը պայմանավորված է այն փաստով, որ կլիմայի և կլիմայական փոփոխությունների վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ հետազոտությունները և զեկույցները հիմնված են ազգային և մարզային մակարդակում առկա տվյալների և տնտեսական ոլորտների ցուցանիշների վրա, հնարավորինս անդրադառնալով մարզային առանձնահատկություններին՝ այդտեղ առկա բնակչության, հողային, ջրային, անտառային, արդյունաբերական և այլ ռեսուրսների կլիմայի նկատմամբ խոցելիության առումով:

▪ **Ուղղակի դիտարկում**

Ուղղակի դիտարկման նպատակն է շրջայցի միջոցով գրանցել այն ամենն, ինչը կարող է պարունակել վտանգ կամ վտանգին դիմակայելու կարողություն, ինչպես նաև կարող է նպաստել աղետների ռիսկի նվազեցմանը, մեղմմանն ու կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված գործողությունների իրականացմանը: Ուղղակի դիտարկման ժամանակ գրանցվում են ԽԿԳ գործընթացի համար անհրաժեշտ համայնքից ստացված առաջնային տպավորություններն ու տեղեկատվությունը: Այն կարող է վերաբերվել առարկաների, մարդկանց, երևույթների, հարաբերությունների և այլն: Հավաքված տվյալները սովորաբար լինում են բազմաբնույթ, քանի որ պարունակում են տեղեկատվություն համայնքի ֆիզիկական տվյալների և կենսագործունեության վերաբերյալ: Կարող են լինել նաև հատուկ նշանակության օբյեկտների սեյսմակայունության գնահատման վերաբերյալ նկատառումներ:

Նախքան դիտարկում իրականացնելն ուսումնասիրվել են երկրորդային աղբյուրներից ատացված որոշ տվյալներ՝ դիտարկվող տարրերի շրջանակը նախապես ձևավորելու նպատակով, ինչը հնարավորություն է տվել իրականացնել ավելի թիրախային դիտարկում:

Ուղղակի դիտարկումն իրականացվել է թիմի անդամների կողմից բնակավայր մտնելու իսկ պահից, նպատակ ունենալով գրանցելու այն ամենն, ինչը վաղուց, գուցե և, սովորական է դարձել համայնքի բնակիչների համար, բայց, որոշակի առումով, վտանգ կամ ռիսկ է պարունակում: Ուղղակի դիտարկումը թիմն իրականացրել է նաև բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքային և ոլորտային աշխատակիցների և բնակիչների մասնակցությամբ: Դիտարկման ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ վարչական ղեկավարը կամ աշխատակիցները տրամադրել են որոշակի տեղեկություններ:

Դիտարկման ընթացքում հավաքագրվել են այնպիսի տեղեկություններ, որոնք չկան և ոչ մի պաշտոնական կամ այլ աղբյուրներում: Հավաքված տվյալները բազմաբնույթ են և պարունակում են բնակավայրի ֆիզիկական վիճակի, կենսագործունեության, ջրային ռեսուրսների և այլի վերաբերյալ տեղեկատվություն: Առանձին ուշադրություն է դարձվել այն տարրերին և վտանգավոր գոտիներին, որոնք առավել խոցելի են կլիմայի փոփոխության նկատմամբ: Դրանք են դեգրադացիայի ենթարկված հողերը, վնասված շրջակա միջավայրը, սողանքային, քարաթափման և սելավային տեղամասերը, ջրային ռեսուրսները և այլն: Դիտարկվել են նաև կլիմայական փոփոխության հետևանքով ոլորտային կառույցներում և ծառայություններում հնարավոր առաջացող խնդիրները:

Քաղաքների համար խոցելի ոլորտների և տեղամասերի դիտարկումները ժամանակատար են և ամբողջական պատկերը չեն ձևավորում:

▪ **Սխեմատիկ պատկերում**

Տվյալների հավաքագրման փուլի կարևորագույն գործիքներից մեկն է, որով ձևավորվում են աղետավտանգ ու ռիսկային տեղանքների ու վայրերի, ինչպես նաև համայնքի կարողությունների և խոցելիության սխեմատիկ պատկերները: Սխեմատիկ պատկերման նպատակն է ակնառու դարձնել համայնքի հիմնական ռիսկային գործոններն ու տեղանքները:

Այն պետք է հնարավորինս տվյալներ տրամադրի շրջակա միջավայրի հիմնական փոփոխությունների վերաբերյալ, այդ թվում նաև կլիմայի փոփոխության ազդեցության հետ կապված:

Սխեմատիկ պատկերման գործընթացը պարտադիր ներառում է համայնքում առկա հասարակական նշանակության օբյեկտները, մասնավորապես առողջապահական, նախակրթական և կրթական, մշակութային հաստատությունները, խաղահրապարակները, մարզադաշտերը, վերջիններիս շրջակայքը, սպառնացող վտանգի ակնհայտ ու թաքնված գործոնները և այլն:

Սխեմատիկ պատկերումն իրականացվել է հետազոտական թիմի ղեկավարի և բնակավայրերի վարչական ղեկավարների կամ օպերատորների հետ համատեղ: Սխեմատիկ պատկերումը նույնպես ժամանակատար է: Այն համեմատաբար դյուրին է գյուղական բնակավայրերի համար: Իսկ քաղաքային բնակավայրերի համար, բացի ժամանակատար լինելուց, նաև աշխատատար է և կան բարդություններ կապված ամբողջական պատկերի ձևավորման հետ:

▪ **Քննարկումներ թիրախային խմբերում**

Թիրախային (ֆոկուս) խմբերը ձևավորվում են համայնքի այն անհատներից, որոնք պատկանում են որոշակի մասնագիտական, տարիքային, սեռային կամ սոցիալական խմբերի, այն է՝ վարչական աշխատողներ, բուժանձնակազմ, ուսուցիչներ, ֆերմերներ, կանայք, տարբեր տարիքային խմբերի երեխաներ և այլն: Հնարավորինս անհրաժեշտ է ներգրավել նաև տարիքով մարդկանց, որոնք կարող են էական տեղեկություններ հաղորդել կլիմայի փոփոխության հետ կապված ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ:

Թիրախային խմբերում քննարկումները նպաստում են տարբեր ոլորտներին (առողջապահություն, գյուղատնտեսություն, շրջակա միջավայր, բնակավայր և ենթակառուցվածքներ, ջրային ռեսուրսներ, կենսապահովում, այլ) վերաբերող տեղեկությունների հավաքագրմանը, առկա ռիսկերի նկատմամբ սոցիալական տարբեր շերտերի խոցելիության աստիճանի բացահայտմանը և այլն:

Աշխատանքը թիրախային խմբերի հետ խիստ կարևորվում է, քանի որ արդյունքում հնարավոր է բացահայտվեն համայնքի զարգացման որոշակի ոլորտներին սպառնացող վտանգներ և ռիսկեր, ներառյալ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված, և քննարկվեն համայնքի համար կենսական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր ձեռնարկումներ:

Թիրախային խմբերի ձևավորման և մասնագիտական կազմով համալրելու գործընթացին աջակցել է համայնքապետարանը: Թիրախային խմբերի հետ աշխատանքը իրականացվել է կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի ոլորտները ներկայացնող մասնագետների, համայնքապետարանի ոլորտային պատասխանատուների/աշխատակիցների հետ հանդիպումների, քննարկումների և հարցազրույցների միջոցով: Քննարկումներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով օգտագործվել է յուրաքանչյուր ոլորտի համար թեմատիկ հարցերի շրջանակ, որը թույլ է տվել ուղղորդել քննարկումների ընթացքը: Ձեռնարկված հարցումները, քննարկումները, հարցազրույցները արձանագրվել են ծրագրային թիմի կողմից:

Քաղաքային բնակավայրում թիրախային խմբերը ոլորտային ներկայացուցչության սկզբունքով ձևավորելն ավելի դյուրին է: Սակայն հարկ է նշել, որ ոչ բոլոր ոլորտային խմբերն էին ներկայացված մասնագետների բացակայության, գործընթացի նկատմամբ հետաքրքրության բացակայության կամ այլ պատճառներով, օրինակ՝ Էներգետիկան, զբոսաշրջությունը:

Գյուղական համայնքներում ոլորտային խմբերի ձևավորումը բարդ է՝ ընդգծված ոլորտային բազմազանություն չլինելու պատճառով: Սակայն, գյուղական բնակավայրերում ձևավորվել են խմբեր, որտեղ ընդգրկվել էին առկա ոլորտների ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ, համայնքային աշխատակիցներ, վարչական ղեկավարը: Հարկ է նշել, որ գյուղական բնակավայրերում խմբերում հնարավորինս ներգրավվել են նաև տարիքով մարդիկ, որոնք էական տեղեկություններ են հաղորդել ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ: Նույնիսկ այս պարագայում, թիրախային խմբերում հնարավոր է եղել քննարկել առանձին ոլորտներին վերաբերող հարցեր, ինչպիսիք են՝ մարդու առողջությունը, գյուղատնտեսությունը, ջրային ռեսուրսները, բնակավայրերն ու ենթակառուցվածքները, այլ:

▪ **Հարմարեցված (ճկուն) հարցազրույց**

Հարմարեցված (ճկուն) հարցազրույցը կիրառվում է թիրախային հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու կամ տրամադրելու համար: Մասնակիցների հետ զրույցներ են ծավալվում համայնքային կյանքի տարբեր ոլորտներում (առողջապահություն,

գյուղատնտեսություն, ձկնաբուծություն, այլ) նրանց կողմից դիտարկվող փոփոխությունների մասին, այդ թվում. ինչով են պայմանավորված այդ փոփոխությունները, ինչ իրադարձությունների հետևանքով են դրանք առաջացել և ինչ հետևանքների հանգեցրել, կապված են, արդյոք, այդ փոփոխությունները կլիմայի փոփոխությամբ պայմանավորված երևույթների հետ: Հնարավորինս անհրաժեշտ է տեղեկատվություն ստանալ տեղի ունեցած եղանակային ծայրահեղ դրսևորումների կամ տարիների ընթացքում նկատված ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունների վերաբերյալ:

Հարցումն իրականացվել է հարցաթերթիկի միջոցով, որը նախատեսված էր համայնքի կամ բնակավայրի ղեկավարի համար: Հարցումները իրականացվել են թիմի ղեկավարի կողմից: Հարցմանը, բացի բնակավայրերի ղեկավարներից, մասնակցել են նաև օպերատորներ, համայնքային աշխատակիցներ և ոլորտային (կրթության, առողջապահության և այլն) մասնագետներ: Հարցման ընթացքում շոշափվել են համայնքային կյանքի տարբեր ոլորտներ՝ բնակավայրի ֆիզիկական վիճակ, գյուղատնտեսություն, զբոսաշրջություն, առողջապահություն, կրթություն և այլն, ինչպես նաև այդ ոլորտներում դիտարկվող փոփոխությունները, այդ փոփոխությունների պատճառները, հետևանքները և ինչքանով են այդ փոփոխությունները պայմանավորված կլիմայի փոփոխությամբ, այլ: Հնարավորինս անդրադարձ է եղել նաև տեղի ունեցած եղանակային ծայրահեղ դրսևորումների կամ տարիների ընթացքում նկատված ջերմաստիճանի և տեղումների փոփոխություններին. ինչպես է դա արտահայտվել և, ըստ իրենց, ինչ հետևանքներ է ունեցել:

Հարկ է նշել, որ բնակավայրից-բնակավայր ստացված պատկերները բավականին տարբեր են:

▪ **Սեզոնային օրացույց**

Սեզոնային օրացույցն աղյուսակային մեթոդ է և հնարավորություն է տալիս նկարագրել մեկ տարվա ընթացքում համայնքում տեղի ունեցած փոփոխությունները: Սեզոնային օրացույցը ցույց է տալիս տարվա ընթացքում տեղի ունեցած աղետները, դրանց ազդեցությունը, կլիմայական փոփոխությունները, բռնկված հիվանդությունները, եկամուտների նվազումը կամ աճը և այլն: Սեզոնային օրացույցը հնարավորություն է տալիս պարզելու նաև, թե արդյոք նկատվում է սեզոնայնության տեղաշարժ է, ինչը հնարավոր է բացասական ազդեցություն ունենա առողջության, ապրուստի միջոցների, կենսական այլ կարևոր նշանակություն ունեցող ոլորտների վրա: Առաջարկվում է նախ դիտարկել ներկա իրավիճակը և հետո անդրադառնալ վերջին տասնամյակներում տեղի ունեցած փոփոխություններին, դիտարկման համար ընտրելով հնարավորինս երկար ժամանակահատված:

Գործիքը կարող է օգտագործվել բնակչության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, նկատի ունենալով, որ եղանակային օրինաչափությունների փոփոխությունների լույսի ներքո կարող է առաջանալ սեզոնային պլանավորման ավանդական մոտեցումները վերանայելու կարիք: Այն կարող է օգտագործվել, օրինակ, ցույց տալու համար, թե ինչպես է փոփոխվում մշակաբույսերի ծաղկման, տնկման և բերքահավաքի ժամանակացույցը, եղանակային և առողջության հետ կապված ինչ նոր վտանգներ կարող են ի հայտ գալ կամ հները հայտնվել տարվա ոչ այն ժամանակին, երբ դրանք սովորաբար հայտնվում էին:

Սեզոնային օրացույցը լրացվել է բնակավայրում ոլորտային մասնագետների, վարչական ղեկավարի, համայնքային աշխատակիցների և բնակիչների հետ հանդիպման ժամանակ: Լրացնելու ժամանակ անդրադառնալ է եղել բնակավայրում մեկ տարվա ընթացքում տեղի ունեցած գործընթացներին, բնորոշ վտանգավոր երևույթներին և այլն, դրանց հետ կապված փոփոխություններին: Նախ դիտարկվել է ներկա իրավիճակը և հետո անդրադառնալ է եղել վերջին տարիներին տեղի ունեցած սեզոնայնության տեղաշարժին, փոփոխություններին, ինչպես նաև ինչքանով են այդ փոփոխությունները կապված կլիմայական փոփոխությունների հետ և ինչ բացասական ազդեցություն են ունեցել կամ կարող են ունենալ համայնքի կյանքի վրա:

▪ **Պատմական օրացույց**

Պատմական օրացույցի նպատակն է բացահայտել տասնամյակների ընթացքում համայնքում տեղի ունեցած այն իրադարձությունները, երևույթները և փոփոխությունները, որոնք էական ազդեցություն են ունեցել համայնքի կենսագործունեության և զարգացման վրա: Այստեղ կարևոր է անդրադառնալ մեծ վնաս հասցրած կլիմայական վտանգավոր երևույթներին, ինչպիսիք են կարկուտը, սելավը, երաշտը, հեղեղումները և այլն: Կարևոր է նաև պարզել այդ երևույթների դրսևորումներում տեղի ունեցած փոփոխությունների պատկերը, դրանց զարգացման միտումները, օրինակ՝ առանձին երևույթի հաճախականության կամ ուժգնության ավելացում:

Պատմական օրացույցը լրացվել է բնակավայրում ոլորտային մասնագետների, վարչական ղեկավարի, համայնքային աշխատակիցների և բնակիչների հետ հանդիպումների ժամանակ: Լրացնելու ժամանակ անդրադառնալ է եղել բնակավայրում տարբեր ոլորտներում տեղի ունեցած փոփոխություններին, բնակչության տեղաշարժին և այլն: Անդրադարձ է եղել նաև տեղի ունեցած

և Եական վնաս հասցրած երևույթներին, հատկապես կլիմայական վտանգավոր երևույթներին, այդ երևույթների դրսևորումներում նկատվել են, արդյոք, ակնառու փոփոխություններ, ինչով են պայմանավորված այդ փոփոխությունները և ինչպես են անդրադառնում այդ փոփոխությունները բնակավայրի խոցելիության վրա: Հարկ է նշել, որ նման տեղեկությունները կրում են սուբյեկտիվ բնույթ:

▪ **Ինստիտուցիոնալ շրջանակ**

Համայնքում անցկացվող ընդհանուր ժողովի ժամանակ մասնակցային սկզբունքով (տեղական ինքնակառավարման մարմիններ, հիմնարկ-ձեռնարկություններ, կրթական օջախներ, առողջապահական կազմակերպություններ, բնակիչներ և այլն) լրացվում է աղյուսակ, որի նպատակն է բացահայտել և դասակարգել պետական և ոչ պետական, հասարակական և միջազգային այն կառույցները, խմբերն ու անհատները, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեն կամ ունեցել են համայնքի սոցիալական կյանքի և զարգացման ոլորտների վրա, հատկապես ուշադրություն դարձնելով երեխայնապաստ գործունեություն ծավալող, հաշմանդամություն ունեցող երեխաների կենսական կարևորության, առաջնային և այլ հարցերը կարգավորող կառույցների վրա: Այդ կառույցները որոշվում են ըստ համայնքի կյանքում ունեցած իրենց կարևորության և ազդեցության (դրական, բացասական կամ անորոշ) աստիճանի:

Այստեղ պետք է նախատեսել եղանակային տեղեկատվության և կանխատեսումների, վաղ ազդարարման, ազրո-օդերևութաբանական ծառայությունների, ինչպես նաև պետության կողմից առաջարկվող գյուղատնտեսական կլիմայակայուն նոր տեխնոլոգիաների և ֆինանսական մեխանիզմների մասին տեղեկատվության հասանելիության հարցը. արդյոք համայնքում առկա է նման խնդիրներով զբաղվող որևէ հաստատություն կամ մեխանիզմ: Եթե այո, ապա ինչքանով է հասանելի և ինչ դերակատարում ունի:

Ինստիտուցիոնալ շրջանակին անդրադարձ է եղել բնակավայրում ոլորտային մասնագետների, վարչական ղեկավարի, համայնքային աշխատակիցների և բնակիչների հետ հանդիպումների ժամանակ: Հանդիպման մասնակիցներին առաջարկվել է տեղական մակարդակում աղետների և կլիմայական ռիսկերի կառավարման տեսանկյունից՝ 1-5 բալային սանդղակով գնահատել պետական և ոչ պետական, հասարակական և միջազգային կառույցների, խմբերի ու անհատների դերակատարումը համայնքային կյանքում, ըստ համայնքի զարգացման վրա ունեցած ազդեցության և համայնքի զարգացման համար կարևորության: Ազդեցության և կարևորության գնահատականները լրացվում են աղյուսակում և միջինացվում:

Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս համայնքին կողմնորոշվել հիմնական շահագրգիռ կողմերի ընտրության հարցում՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության միջոցառումներին հնարավոր մասնակցություն կամ աջակցություն ցուցաբերելու առումով:

▪ **Չանգվածային հարցում բնակիչների շրջանում հարցաթերթիկների միջոցով**

Այս գործիքի կիրառումը թույլ է տալիս հատուկ մշակված հարցաշարի օգնությամբ տեղի բնակչությունից համայնքի վերաբերյալ բազմաբնույթ տեղեկատվություն ստանալու արդյունքում հանգել որոշակի եզրակացությունների համայնքին սպառնացող վտանգների, խոցելիության և դիմակայելու/հարմարվողականության կարողությունների վերաբերյալ: Հարցաշարում ներառված են նաև հարցեր կլիմայի փոփոխության, համայնքի վրա վերջինիս ազդեցության և այդ ազդեցությանը դիմակայելու վերաբերյալ մարդկանց իրազեկվածության մակարդակը պարզելու համար: Գործիքը նախատեսված է անհատական հարցում անցկացնելու համար, ինչը ենթադրում է հարցման լիարժեք կոնֆիդենցիալություն և հարգանք հարցվողի իրավունքների և շահերի նկատմամբ:

Բոլոր բնակավայրերում բնակիչների շրջանում իրականացվել է հարցում հարցաթերթիկների միջոցով, որի արդյունքում հավաքագրվել են որոշակի տեղեկություններ համայնքի վերաբերյալ, հատկապես սպառնացող վտանգների, կլիմայի փոփոխության հետևանքով տեղ գտած փոփոխությունների, եղանակի տեղական փոփոխությունների և առաջացրած հետևանքների հետևանքների մասին, այլ: Սակայն հարցման ընթացքում պարզ է դարձել, որ հատկապես գյուղական բնակավայրերում կա «կլիմայի փոփոխություն» հասկացության վերաբերյալ իրազեկվածության պակաս:

Հարկ է նշել, որ բնակիչներից ոչ բոլորն են համաձայնվել մասնակցել հարցմանը, քանի որ մեկ մասնակցի հաշվով հարցումը բավականին ժամանակատար էր (30-40 րոպե), ինչի պատճառով հարցումները նույնիսկ կիսատ էին մնում, ինչպես նաև մասնակիցների մի մասը հրաժարվում էր պատասխանել որոշ հարցերի (եկամուտներ, անձնական և ընտանիքի մասին տվյալներ):



Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են իգական և արական սեռի համարյա բոլոր տարիքային խմբերի (18-84) ներկայացուցիչներ: Հարցվողների ընդհանուր թիվը կազմել է 98

մարդ, որից 50-ը՝ Ստեփանավան քաղաքից, 10-ը՝ Արմանիս, 15-ը՝ Ուրասար և 23-ը՝ Կաթնաղբյուր բնակավայրերից:


Ստորև ներկայացված են հարցվողների ընտանիքի վերաբերյալ որոշակի տեղեկություններ:

Համայնք	Հարցումների մասնակցել է (մարդ)	Մասնակիցների սեռատարիքային կազմը (%)				
		Կին	Տղամարդ	Մինչև 18 տարեկան	18-65 տարեկան	65-ից բարձր
Ստեփանավան	98	52.0	48.0	5.3	70.2	24.5

Ընտանիքի անդամների սեռատարիքային կազմը




Ընտանիքի անդամների զբաղվածությունը




- Արդյունաբերական ձեռնարկություններում ներգրավվածներ
- Արտագնա աշխատողներ
- Գյուղատնտեսությամբ զբաղվողներ
- Ծառայողներ
- Չեռնրեցություն
- Սովորողներ
- Տնային տնտեսությունում զբաղվածներ

Հասանելի կապի եվ հաղորդակցության միջոցներ




- Այլ
- Արբանյակային հեռուստատեսություն
- Բջջային հեռախոսակապ
- Ինտերնետ
- Կարելային հեռուստատեսություն
- Հանրային ռադիո կամ հեռուստատեսություն
- Մամուլ
- Տեղական ռադիո կամ հեռուստատեսություն
- Ֆիքսված հեռախոսակապ


Ընտանիքի կազմը՝ ըստ ընտանիքի անդամների քանակի




Ընտանիքի անդամների կրթական մակարդակը



Խմելու ջրի հիմնական աղբյուրը




Էներգիայի հիմնական աղբյուրը



Եկամտի հիմնական աղբյուրը



Անբավարար եկամտի պարագայում ձեռնարկվող միջոցները



4. Համայնքին սպառնացող վտանգներ և վերջիններիս ռիսկերին դիմակայելու համայնքին առաջարկվող հնարավոր լուծումներ

4.1. Համայնքի խոցելիության և ռիսկերի գնահատման արդյունքներն ըստ բնակավայրերի, խոցելի ոլորտների և սպառնացող վտանգավոր երևույթների

Ծրագրի կողմից հավաքագրված տվյալների մշակման, ճշգրտման, ուսումնասիրման և վերլուծման արդյունքում գնահատականներ են ձևավորվել համայնքի բնակավայրերին սպառնացող վտանգների, դրանց նկատմամբ բնակավայրի խոցելիության և այդ վտանգներից առաջացող ռիսկերի վերաբերյալ: Առաջարկություններ են ձևավորվել այդ ռիսկերին դիմակայելու համար, ոլորտ առ ոլորտ ներկայացնելով համայնքում ձեռնարկվող հնարավոր միջոցառումների փաթեթ:

Նշված արդյունքները ներկայացված են հաջորդիվ հատուկ մշակված երեք ձևանմուշների տեսքով՝

- բնակավայրերի կլիմայական և աղետների ռիսկի գնահատում,
- բնակավայրին սպառնացող վտանգների, կարողությունների, խոցելիության և ռիսկերի սխեմատիկ պատկերում,
- աղետների ռիսկի նվազեցման և ոլորտային հարմարվողականության առաջարկություններ:

Ռիսկի գնահատման ձևանմուշում օգտագործված հապավումների նշանակությունը և դրանց փոխհարաբերությունները բերված են ստորև (Նկար 7)։

Նկար 7. Ռիսկի գնահատման ձևանմուշի օրինակ

ՎՏԱՆԳ	Ստեփանավան		Արմանիս		Ուրասար		Կաթնաղբյուր	
	Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոգիերոլոթարանական կամ դրանց հետևանքով զարգացող վտանգների նկատմամբ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր)							
	Խ		Խ		Խ		Խ	
	Վ – վտանգի հավանականություն (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), Ռ – ռիսկ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), ■-վտանգ չի ապաստում							
	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ
Կարկտահարություն	■	■	■	■	■	■	■	■
Ցրտահարություն	■	■	■	■	■	■	■	■
Երաշտ / Տեղումների չորային եղանակ	■	■	■	■	■	■	■	■
Ուժեղ քամի	■	■	■	■	■	■	■	■
Տեղումներ / հորդառատ անձրևներ	■	■	■	■	■	■	■	■
Ամպրոպ / կայծակ	■	■	■	■	■	■	■	■
Խտտածածկ տարածքների հրդեհներ	■	■	■	■	■	■	■	■

Վ – վտանգ՝ ներկայացվում է որպես բնակավայրին սպառնացող առանձին վտանգի կայանալու հավանականություն

Խ – խոցելիություն, վտանգի կամ վտանգների խմբի նկատմամբ բնակավայրի խոցելիություն: Խոցելիությունը բնակավայրի համակարգերի և տարրերի վտանգին ենթարկվածության և վերջինիս դիմակայելու առկա կարողությունների համադրությունն է: Կլիմայական ռիսկերի պարագայում այդ երկու բաղադրիչների հետ համատեղ հաշվի է առնվում նաև բնակավայրի վտանգի ենթակա համակարգերի զգայունությունը կլիմայի փոփոխության նկատմամբ:

Ռ – վտանգի նկատմամբ բնակավայրի ռիսկ: Ռիսկի մասին եզրակացություն է արվում վտանգի հավանականությունը համադրելով վերջինիս նկատմամբ բնակավայրի խոցելիության հետ, հետևյալ տրամաբանական բանաձևով՝ **Ռ=Վ*Խ**:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՄԲ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՎՏԱՆՁԵՐԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԵՎ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՅԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Համայնքում իրականացված ռիսկերի գնահատման արդյունքներով պայմանավորված հարմարվողականության լուծումներն առաջարկված են միայն առանձին վտանգի նկատմամբ միջին կամ բարձր ռիսկայնություն ունեցող բնակավայրերի համար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

ՎՏԱՆՁ	Ստեփանավան		Արմանիս		Ուրասար		Կաթնաղբյուր	
	Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոոգերևութաբանական կամ դրանց հետևանքով զարգացող վտանգների նկատմամբ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր)							
	Խ		Խ		Խ		Խ	
	Վ – վտանգի հավանականություն (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), Ռ – ռիսկ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), ■-վտանգ չի սպառնում							
	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ
Կարկտահարություն	■	■	■	■	■	■	■	■
Ցրտահարություն	■	■	■	■	■	■	■	■
Երաշտ / Տևական չորային եղանակ	■	■	■	■	■	■	■	■
Ուժեղ քամի	■	■	■	■	■	■	■	■
Տևական / հորդառատ անձրևներ	■	■	■	■	■	■	■	■
Ամպրոպ / կայծակ	■	■	■	■	■	■	■	■
Խոտածածկ տարածքների հրդեհներ	■	■	■	■	■	■	■	■

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ՝ ՅԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԿԱՐԿՏԱՅԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՌԻՍԿ

Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր

միջին

ՌԻՍԿԻ ՍԱՅՄԱՆՈՒՄ

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

1. Տնամերձերի և գյուղատնտեսության արտադրողականության անկում
2. Անասնապահության անկում խնդիրների առաջացման հետևանքով (խոտի պակաս և թանկացում, հարկադիր, չպլանավորված մորթ)
3. Եկամտի նվազում և նյութական վնասներ
4. Սննդի և պարենի անվտանգության հարցերի առաջացում

- Հակակարկտային համակարգերի/միջոցների բացակայություն
- Հացահատիկի, կարտոֆիլի, բանջարանոցային և այլ մշակաբույսերի, հատապտուղների և պտղատու ծառերի բերքի նվազում կամ կորուստ, սպասվելիք բերքի որակի անկում
- Խոտհարքների վնասում, անասնախոտի նվազում
- Խոշոր չափի կարկուտը կարող է դառնալ մանր եղջերավոր անասունների և քնտանի թռչունների կորստի պատճառ
- Անասնագուների և այլ արտադրական շինությունների տանիքների վնասում
- Ապահովագրական ծառայությունների դժվար հասանելիություն
- Ֆինանսավարկային ծառայությունների դժվար հասանելիություն
- Գյուղական բնակչության սոցիալական վատ պայմաններ

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում **Ա1**
2. Գյուղատնտեսական միավորումների հիմնում **Ա2**
3. Հակակարկտային համակարգերի/միջոցների տեղադրում **Ա3**
4. Գյուղարտադրանքի պահեստավորման և պահպանման համապատասխան կառույցների հիմնում (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) **Ա4**
5. Անասնագուների և այլ արտադրական շինությունների պայմանների բարելավում, նոր գոմերի կառուցում (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) **Ա5**
6. Կլիմայի փոփոխության մեղմացման ուղղությամբ կրթություն և վերապատրաստում գյուղատնտեսության արտադրողականությամբ զբաղվողների համար **Ա6**
7. Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և ներդրում **Ա7**

ՑՐՏԱՅԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՌԻՍԿ

Ստեփանավան

ցածր

Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր

միջին

ՌԻՍԿԻ ՍԱՅՄԱՆՈՒՄ

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

1. Եկամտի նվազում և նյութական վնասներ
2. Սննդի և պարենի անվտանգության հարցերի առաջացում

- Հացահատիկի, կարտոֆիլի, բանջարանոցային և այլ մշակաբույսերի, հատապտուղների և պտղատու ծառերի բերքի նվազում կամ կորուստ:
- Համապատասխան գիտելիքների պակաս
- Վաղ ազդարարման համակարգի բացակայություն
- Ազդարարման մեխանիզմի անկատարության

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում **Ա1**
2. Գյուղատնտեսական միավորումների հիմնում **Ա2**
3. Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և ներդրում **Ա7**
4. Պետական գերատեսչությունների կամ համապատասխան խորհրդատվական ծառայությունների կողմից պարբերաբար վերապատրաստման, աջակցության կամ խորհրդատվության ստացման մեխանիզմների մշակում և ներդրում **Ա8**
5. Ուսումնասիրել կլիմայի փոփոխությանը հարմարեցված մշակաբույսերի և սորտերի ներդրման հնարավորությունները և աջակցել բնակչությանը սերմերի և տնկիների ձեռքբերման գործում՝ միաժամանակ ապահովելով այդ բուսատեսակների մշակման հետ կապված մասնագիտական խորհրդատվությունը **Ա9**

ԵՐԱՇՏ

ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՌԻՍԿ

ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

1. Տնամերձերի, անտառների և գյուղատնտեսության արտադրողականության անկում
2. Անասնապահության և մեղվաբուծության անկում
3. Գյուղատնտեսական նշանակության հողերի վատթարացում /դեգրադացում
4. Եկամտի նվազում և նյութական վնասներ
5. Սննդի և պարենի անվտանգության հարցերի առաջացում

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

- Վաղ ազդարարման համակարգի բացակայություն
- Ոռոգման բացակայություն
- Հացահատիկի, կարտոֆիլի, բանջարանոցային և այլ մշակաբույսերի, հատապտուղների և պտղատու ծառերի բերքի նվազում կամ կորուստ, սպասվելիք բերքի որակի անկում, ինչպես նաև անտառների ու դաշտերի բերքի նվազում
- Մեղվաբուծության և անասնապահության արտադրանքի նվազում
- Գյուղատնտեսական մշակաբույսերի շրջանում վնասատուների և հիվանդությունների տարածման հավանականության բարձրացում
- Գյուղատնտեսական կենդանիների և մեղուների շրջանում հիվանդությունների տարածման հավանականության բարձրացում, մեղվաբուծության և անասունների կորուստ
- Արտավայրերում և խոտհարքներում խոտի քանակի նվազում և որակազրկում, անասնախոտի թանկացում, չպլանավորված մորթ, անասնազխաքանակի նվազում
- Գյուղատնտեսական հողերի որակի անկում, Էռոզացման երևույթների խորացում
- Հանքարդյունաբերական գործունեության արդյունքում թափոնների արտանետում (**Արմանիս, Ուրասար**)
- Գյուղատնտեսական հողերի մելիորացման գործողությունների բացակայություն
- Հնացած գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործում/ծանր տրանսպորտային միջոցների կանոնավոր մուտք դաշտեր
- Խոտհարքների, տարիներ շարունակ չմշակվող վարելահողերի և վարելահողերի խոտհարքի վերածված տարածքների գերօգտագործում
- Արտավայրերի ոչ պատշաճ կառավարում՝ չկարգավորված, ոչ կայուն արածեցում, գերարածեցում
- Անտառների մելիորացման գործողությունների բացակայություն
- Ժամանակակից գյուղատնտեսական մեթոդների վերաբերյալ համապատասխան գիտելիքների պակաս
- Գյուղատնտեսական տեխնիկայի անբավարարություն և մաշվածություն
- Համապատասխան խորհրդատվական ծառայությունների դժվար հասանելիություն
- Պահեստավորման և պահպանման խնդիրներ
- Գյուղական բնակչության սոցիալական վատ պայմաններ

ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում: **Ա1**
2. Գյուղատնտեսական միավորումների հիմնում **Ա2**
3. Պետական գերատեսչությունների կամ համապատասխան խորհրդատվական ծառայությունների կողմից պարբերաբար վերապատրաստման, աջակցության կամ խորհրդատվության ստացման մեխանիզմների մշակում և ներդրում **Ա8**
4. Ուսումնասիրել կլիմայի փոփոխությանը հարմարեցված մշակաբույսերի և սորտերի ներդրման հնարավորությունները և աջակցել բնակչությանը սերմերի և տնկիների ձեռքբերման գործում՝ միաժամանակ պահպանելով այդ բուսատեսակների մշակման հետ կապված մասնագիտական խորհրդատվությունը **Ա9**
5. Գյուղատնտեսական հողերի կայուն կառավարման պլանների վերանայում. առանձնահատուկ ուշադրություն դարձնել պահպանմանն ու վերականգնմանն ուղղված աշխատանքներին, մշակել օգտագործման և պահպանման միջոցառումների պլան՝ գերարածեցումը և Էռոզացման պրոցեսները կանխելու նպատակով **Ա10**
6. Գյուղատնտեսական հողերի մելիորացման գործողությունների իրականացում (**Արմանիս, Ուրասար**) **Ա11**
7. Ոռոգման համակարգերի հիմնում, ոռոգման ժամանակակից ջրախնայող տեխնոլոգիաների (լոկալ ջրամբարներ, ձնհալից գոյացած ջրեր, անձրևաջրերի կուտակման ավազաններ) կիրառման խթանում. համապատասխան մասնագետների մասնակցությամբ ուսումնասիրել և գույքագրել այն տարածքները, որտեղ նման տեխնոլոգիաները կիրառելի են և արդյունավետ (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա12**
8. Արտադրության համար օգտագործվող պարարտանյութերի և թունաքիմիկատների նվազեցմանն ուղղված միջամտություններ կամ դրանց փոփոխություն (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա13**
9. Անասնաբուծության համակարգերի արտադրողականության և կայունության բարելավում. խոտհարքների արդյունավետ կառավարում, գյուղատնտեսական կենդանիների տեսակների փոփոխություն, նոր բարձր մթերատու հատկանիշներ ունեցող կաթնատու և մսատու ցեղերի ներմուծում և բուծում (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա14**
10. Ուսումնասիրել և մշակել դաշտերում և անտառներում, ըստ կոնկրետ տարածքների, խմուցների և ջրակուտակման միավորների (ձնհալից գոյացած ջրեր և անձրևաջրերի կուտակման ավազաններ) ստեղծմանը, կամ ջրի խնայողաբար օգտագործմանն ու կորուստների նվազեցմանն ուղղված աշխատանքային պլաններ (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա15**
11. Անասունների կերակրման և արածեցման գործելաոճերի փոփոխում, օրինակ՝

- ծածկության մշակաբույսերի կիրառում էլեկտրական հովիվով առանձնացված տարածքներում և շրջանառու արածեցման պրակտիկայի կիրառում **Ա16**
12. Անասնագույների և այլ արտադրական շինությունների պայմանների բարելավում, նոր գոմերի կառուցում (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա17**
13. Անասնաբուժական ծառայությունների բարելավում և պատվաստումների շրջանակի ընդլայնում **Ա18**
14. Մեղվաբուծության զարգացումը խթանելու համար ապահովել կլիմայի փոփոխությանը դիմակայելու մասնագիտական խորհրդատվության կազմակերպում, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելմանն ու բուժմանն ուղղված խորհրդատվություն **Ա19**
15. Գյուղատնտեսական նոր տեխնիկայի ձեռքբերում, գյուղատնտեսական տեխնիկայի համայնքային կենտրոնի հիմնում **Ա20**
16. Գյուղարտադրանքի պահեստավորման և պահպանման համապատասխան կառույցների հիմնում **Ա4**

ՏԵՎԱԿԱՆ/ՅՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎՆԵՐ ԱՄՊՐՈՊ, ԿԱՅՏԱԿ

ՌԻՍԿԻ ՍԱՅՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ
<ol style="list-style-type: none"> Եկամտի նվազում և նյութական վնասներ Սննդի և պարենի անվտանգության հարցերի առաջացում 	<ul style="list-style-type: none"> Գերխոնավություն, ինչի հետևանքով հացահատիկի, կարտոֆիլի, հատապտուղների բերքի և անասնախոտի վնասում/փչացում: Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման անհնարինություն: Դաշտամիջյան ճանապարհների դժվարանցանելիություն Կայծակների պատճառով անասունների կորուստի հավանականություն Վաղ ազդարարման համակարգի բացակայություն Ազդարարման մեխանիզմի անկատարության

ԲՆԱԿԱԿԱՅՐ

Ստեփանավան

Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր

ՌԻՍԿ	ԳՄԾՐ	ՄԻՋԻՆ
ՅԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ		
<ol style="list-style-type: none"> ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում: Ա1 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում Ա7 Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում և ջրահեռացման համակարգերի կառուցում Ա21 Շանթարգելների տեղադրում Ա22 		

ՌԻԺԵՂ ԶԱՄԻՆԵՐ

ՌԻՍԿԻ ՍԱՅՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ
<ol style="list-style-type: none"> Գյուղատնտեսական նշանակության հողերի վատթարացում Բերքի վնասում Գյուղ. շինությունների վնասում 	<ul style="list-style-type: none"> Արմանիսի ոսկու հանքի թափոններից բարձրացած փոշին տարածվում է Արմանիս, Ուրասար բնակավայրերի գյուղատնտեսական հողերի վրա: Ամռան ժամանակահատվածում վնասվում է հացահատիկի բերքը, բերքատու ծառերը, գյուղ. շինությունները:

ԲՆԱԿԱԿԱՅՐ

Ստեփանավան

Կաթնաղբյուր Արմանիս Ուրասար

ՌԻՍԿ	ԳՄԾՐ	ՄԻՋԻՆ
ՅԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ		
<ol style="list-style-type: none"> Գյուղատնտեսական հողերի մեկուկուսուկուս գործողությունների իրականացում (Արմանիս, Ուրասար) Ա11 Հացահատիկի դաշտերի եզրերով ծառատնկի իրականացում (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) Ա23 		

ԱՆՏԱՌԱՅԻՆ / ԽՈՏԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՐԴԵՋՆԵՐ

ԲՆԱԿԱԿԱՅՐ **ՌԻՍԿ**

ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

- Գյուղատնտեսական նշանակության հողերի վատթարացում
- Խոտի քանակի և որակի անկում

- Խոտածածկ տարածքների հրդեհների կառավարման անկատարություն
- Գյուղատնտեսական հողերի, արոտավայրերի և խոտհարքների վնասում, բերրի շերտի քայքայում
- Էռոզիայի երևույթների աճ

ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում: **Ա1**
- Բնակչության իրազեկում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման և հողերի վրա հրդեհների վնասակար ազդեցության վերաբերյալ **Ա24**
- Բուսածածկ տարածքներում և անտառներում հրդեհային անվտանգության տեղեկատվական վահանակների տեղադրում **Ա25**
- Կամավորական ջրկառի ստեղծում, ուսուցում և համապատասխան գույքով համալրում (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա26**
- Դաշտերում և անտառներում, ըստ կոնկրետ տարածքների, ջրակուտակման միավորների (ձնհալից գոյացած ջրեր և անձրևաջրերի կուտակման ավազաններ) ստեղծման հնարավորությունների ուսումնասիրում և մշակում **Ա2**
- Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում **Ա7**

ՍԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

	Ստեփանավան		Արմանիս		Ուրասար		Կաթնաղբյուր	
	Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոօդերևութաբանական կամ դրանց հետևանքով զարգացող վտանգների նկատմամբ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր)							
	Խ		Խ		Խ		Խ	
	Վ – վտանգի հավանականություն (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), Ռ – ռիսկ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), ■-վտանգ չի սպառնում							
	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ
Երաշտ / Տևական չորային եղանակ	■	■	■	■	■	■	■	■
Ուժեղ քամի	■	■	■	■	■	■	■	■
Ձնաբուք / Առատ ձյուն	■	■	■	■	■	■	■	■
Ամպրոպ / կայծակ	■	■	■	■	■	■	■	■

ՍԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱԿՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ձևաթուղ

ԲՆԱԿԱԿԱՅՐ

ՌԻՍԿ

ԱՌԱՏ ՁՅՈՒՆ

ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

1. Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնալիք
2. Սնուցման իրավիճակի վատթարացում

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

- Վաղ ազդարարման համակարգի բացակայություն
- **Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր** միջհամայնքային ճանապարհների խցանում, ինչի հետևանքով խաթարված կապը Ստեփանավանի հետ, որտեղ տեղակայված են առողջապահական և հրշեջ-փրկարար ծառայությունները
- Բուժկետի թերի հագեցվածություն (անհրաժեշտ դեղերի և բժշկական պարագաների պակաս, բուժկետի անբավարար պայմաններ, սպասարկող բուժքույրերի գործնական և տեսական անբավարար գիտելիքներ, ուղեցույցերի բացակայություն)
- Ճանապարհների խցանման պատճառով սննդի և պարենի մատակարարման խնդիրների առաջացում

Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր

միջին

ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում **Ա1**
2. Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում **Ա7**
3. Բուժկետերի պայմանների և հագեցվածության բարելավում **Ա28**
4. Կանաչ տարածքների ընդլայնում **Ա29**
5. Շտապ օգնության ու փրկարար ծառայությունների հասանելիության և սննդամթերքի մատակարարման ապահովման ուղղությամբ քայլերի նախաձեռնում, համապատասխան տեխնիկայի ձեռքբերում **Ա30**
6. Մշակել և ներդնել Ստեփանավանի և գյուղական բնակավայրերի բուժաստատությունների միջև կապի մեխանիզմ **Ա31**
7. Գյուղերի սպասարկող բուժքույրերի գործնական և տեսական գիտելիքների բարձրացման դասընթացների կազմակերպում **Ա32**

ԲՆԱԿԱԿԱՅՐ

ՌԻՍԿ

Ստեփանավան,

ցածր

Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր

միջին

ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում: **Ա1**
2. Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և ներդնում **Ա7**
3. Գյուղատարտադրանքի պահեստավորման և պահպանման համապատասխան կառույցների հիմնում **Ա4**
4. Բուժաշխատողների իրազեկվածության բարձրացում ԿՓ և մարդու առողջության վրա ԿՓ ազդեցության վերաբերյալ **Ա33**
5. Մշակել ԿՓ պայմանավորված առողջական կանխարգելիչ և արձագանքման միջոցառումների տարեկան պլաններ **Ա34**
6. Մշակել հանրային առողջության պլանային մոնիթորինգի մեխանիզմ, հատկապես սեզոնային հիվանդությունների և համաճարակների բռնկումները կանխարգելելու նպատակով **Ա35**
7. Բուժկետերի պայմանների և հագեցվածության բարելավում **Ա28**
8. Կանաչ տարածքների ընդլայնում **Ա29**
9. Իսմելու ջրի համակարգի ֆիզիկական վիճակի և կառավարման արդյունավետության ուսումնասիրում՝ գնահատելով միաժամանակ կլիմայի փոփոխության բացասական ազդեցության իրական չափը իսմելու ջրի սակավության վրա **Ա36**
8. Ջրամատակարարման բարելավման աշխատանքների իրականացում (ներքին և արտաքին ցանց, մաքրման կայաններ) (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա37**
9. Ջրային ռեսուրսների կառավարման պլանի մշակում և ներդրում **Ա38**

ԵՐԱՇՏ

ՏԵՎԱԿԱՆ ՉՈՐԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ

ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

1. Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնալիք
2. Սնուցման իրավիճակի վատթարացում
3. Սանիտարահիգիենիկ վիճակի վատթարացում

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

- Իսմելու ջրի քանակի նվազում:
- Ջրամատակարարման համակարգի անկատարություն
- Թունավորումների, ինֆեկցիոն, սրտանոթային և շնչառական հիվանդությունների և սեզոնային ալերգիաների աճ:
- Զրոնիկ հիվանդությունների սրացման և կյանքին սպառնացող դեպքերի աճ:
- Բնակչության շրջանում համապատասխան գիտելիքների պակաս
- Վաղ ազդարարման համակարգի բացակայություն
- Գյուղատնտեսական մշակաբույսերի, մեղվաբուծության և անասնապահության արտադրանքի, ինչպես նաև անտառների ու դաշտերի բերքի նվազում:

10 Բնակչության շրջանում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ իմացության և իրազեկվածության բարձրացում **Ա39**

ՈՒԺԵՂ ԶԱՄԻՆԵՐ

ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՌԻՍԿ

Արմանիս, Ուրասար

միջին

ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

1. Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնալիք

- Ուժեղ քամիների հետևանքով հանքի թափոններից բարձրացած փոշին տարածվում է Արմանիս, Ուրասար բնակավայրերի շրջակայքով, ախտոտելով օդը, ջուրը, բույսերը, ինչը վտանգում է մարդկանց առողջությունը:

ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 1 Կանաչ տարածքների ընդլայնում **Ա29**
- 2 Օդի, ջրի և հողի մեջ վնասակար նյութերի պարունակության որոշման համար հետազոտությունների կազմակերպում և համապատասխան միջոցառումների պլանավորում **Ա40**

ԱՄՊՐՈՊ / ԿԱՅԾԱԿ

ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՌԻՍԿ

Ստեփանավան

ցածր

Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր

միջին

ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

1. Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնալիք

- Վարվելականոնների իմացության բացակայություն
- Շանթարգելների բացակայություն արոտներում

ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 1 Շանթարգելների տեղադրում **Ա22**
- 2 ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում **Ա1**
- 3 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և ներդրում **Ա7**

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

	Ստեփանավան		Արմանիս		Ուրասար		Կաթնաղբյուր	
	Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոոդերևութաբանական կամ դրանց հետևանքով զարգացող վտանգերի նկատմամբ (■ -ցածր, ■ -միջին, ■ -բարձր)							
	Խ	Խ	Խ	Խ	Խ	Խ	Խ	Խ
	Վ – վտանգի հավանականություն (■ -ցածր, ■ -միջին, ■ -բարձր), Ռ – ռիսկ (■ -ցածր, ■ -միջին, ■ -բարձր), ■ -վտանգ չի սպառնում							
	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ
Երաշտ / Տևական չորային եղանակ								
Տևական / Հորդառատ անձրևներ								

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԵՐԱՇՏ

ՏԵՎԱԿԱՆ ՉՈՐԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ

ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՌԻՍԿ

Ստեփանավան

ցածր

ՌԻՍԿԻ ՍԱՅՄԱՆՈՒՄ

1. Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնալիք
2. Խմելու ջրի մատակարարման վատթարացում
3. Արտավայրերում ջրի քանակի նվազում
4. Սանիտարահիգիենիկ վիճակի վատթարացում

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

- Ջրի քանակի նվազում սնող աղբյուրներում
- Ջրամատակարարման համակարգի ֆիզիկական վիճակի անկատարություն
- Ջրամատակարարման կառավարման անկատարություն
- Վաղ ազդարարման համակարգի բացակայություն

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 1 ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում: **Ա1**
- 2 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և ներդնում **Ա7**
- 3 Ուսումնասիրել և մշակել դաշտերում և անտառներում, ըստ կոնկրետ տարածքների, խմոցների և ջրակուտակման միավորների (ձնհալից գոյացած ջրերի և անձրևաջրերի կուտակման ավազաններ) ստեղծմանը, կամ ջրի խնայողաբար օգտագործմանը և կորուստների նվազեցմանն ուղղված աշխատանքային պլաններ (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր): **Ա15**
- 4 Բուժկետերի պայմանների և հազեցվածության բարելավում **Ա28**
- 5 Կանաչ տարածքների ընդլայնում **Ա29**
- 6 Խմելու ջրի համակարգի ֆիզիկական վիճակի և կառավարման արդյունավետության ուսումնասիրում՝ գնահատելով միաժամանակ կլիմայի փոփոխության բացասական ազդեցության իրական չափը խմելու ջրի սակավության վրա **Ա36**
- 7 Ջրամատակարարման բարելավման աշխատանքների իրականացում (ներքին և արտաքին ցանց, մաքրման կայաններ) (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) **Ա37**
- 8 Ջրային ռեսուրսների կառավարման պլանի մշակում և ներդրում **Ա38**
- 9 Բնակչության շրջանում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ իմացության և իրազեկվածության բարձրացում **Ա39**
- 10 Խմելու ջրի պահեստավորման, պահպանման և մաքրման համապատասխան կառույցների հիմնում **Ա41**

ՏԵՎԱԿԱՆ/ՅՈՐՂԱՌՈՍ ԱՆՁԲԵՎՆԵՐ

ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՌԻՍԿ

Ստեփանավան,

Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր

ցածր

միջին

ՌԻՍԿԻ ՍԱՅՄԱՆՈՒՄ

1. Խմելու ջրի աղտոտվածության բարձրացում
2. Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնալիք

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

- Ջրամատակարարման համակարգի ֆիզիկական վիճակի անկատարություն
- Ջրամատակարարման կառավարման անկատարություն
- Բնակչության շրջանում համապատասխան գիտելիքների պակաս

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 1 ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում **Ա1**
- 2 Խմելու ջրի համակարգի ֆիզիկական վիճակի և կառավարման արդյունավետության ուսումնասիրում՝ գնահատելով միաժամանակ կլիմայի փոփոխության բացասական ազդեցության իրական չափը խմելու ջրի սակավության վրա **Ա36**
- 3 Ջրամատակարարման բարելավման աշխատանքների իրականացում (ներքին և արտաքին ցանցի, մաքրման կայանների) (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) **Ա37**
- 4 Ջրային ռեսուրսների կառավարման պլանի մշակում և ներդրում **Ա38**

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ՈՒ ԵՆԹԱԿԱՌՈՒՑԿԱԾՔՆԵՐ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Ստեփանավան	Արմանիս	Ուրասար	Կաթնաղբյուր
Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոտեղեկաբանական կամ դրանց հետևանքով զարգացող վտանգների նկատմամբ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր)			
Խ	Խ	Խ	Խ

	Վ – վտանգի հավանականություն (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), Ռ – ռիսկ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), ■-վտանգ չի սպառնում							
	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ
	Ուժեղ քամի	■	■	■	■	■	■	■
Ձնաբուք / Առատ ձյուն	■	■	■	■	■	■	■	■
Սելավ	■	■	■	■	■	■	■	■
Տևական / հորդառատ անձրևներ	■	■	■	■	■	■	■	■

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ՈՒ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ՝ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՈՒԺԵՐ ԶԱՄԻՆԵՐ		ԲՆԱԿԱՎԱՅՐ	ՌԻՍԿ
<p>ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ</p> <ol style="list-style-type: none"> Տանիքների վնասում Էլեկտրամատակարարման խափանում Ենթակառուցվածքների (զազամատակարարում, էլեկտրամատակարարում, ճանապարհ) հետ խնդիրների առաջացում 	<p>ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ</p> <ul style="list-style-type: none"> Բնակելի տների, շենք-շինությունների ֆիզիկական վատ վիճակ Էլեկտրահաղորդակցման համակարգի ֆիզիկական վատ վիճակ Գյուղական բնակչության սոցիալական վատ պայմաններ Ենթակառուցվածքների (զազամատակարարման, շենք-շինությունների վնասում, ճանապարհների խցանում և այլն) հետ խնդիրների առաջացման պատճառներ են ծառերի ու Էլեկտրահաղորդակցման սյուների տապալումները, տանիքների և էլեկտրական լարերի խափանումը 	<p>Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր</p> <p>ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ</p> <ol style="list-style-type: none"> Կանաչ տարածքների ընդլայնում Ա29 Ուսումնասիրել բնակելի տների և շենք-շինությունների ֆիզիկական վիճակը, միաժամանակ գնահատելով կլիմայի փոփոխության բացասական ազդեցության իրական չափը և մշակել կորուստների նվազեցմանն ուղղված աշխատանքային պլաններ Ա42 Ուսումնասիրել և մշակել տարածաշրջանին բնորոշ փոքր և միջին բիզնես մոդելներ, տնային տնտեսությունների համար, բացի տնամերձերից ստացվող համեստ եկամուտից, զբաղվածության այլ հնարավորություններ ստեղծելու նպատակով Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր Ա43 Եներգիայի այլընտրանքային աղբյուրների հիմնում (դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, վարչական շենք) Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր Ա44 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և ներդրում Ա7 	<p>միջին</p>

ՏԵՎԱԿԱՆ/ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎՆԵՐ		ԲՆԱԿԱՎԱՅՐ	ՌԻՍԿ
<p>ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ</p>	<p>ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ</p>	<p>Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր</p> <p>ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ</p>	<p>ցածր</p> <p>միջին</p>

- 1 Ճանապարհների վնասում
- 2 Բնակելի տների, շենք-շինությունների վնասում

- Սելավատարների և հեղեղատարների բացակայություն
- Ջրահեռացման համակարգի աղտոտվածություն **Ստեփանավան**
- Բնակելի տների, շենք-շինությունների ֆիզիկական վատ վիճակ
- Գյուղական բնակչության սոցիալական վատ պայմաններ:

- 1 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում **Ա7**
- 2 Ուսումնասիրել բնակելի տների և շենք-շինությունների ֆիզիկական վիճակը, միաժամանակ գնահատելով կլիմայի փոփոխության բացասական ազդեցության իրական չափը և մշակել կորուստների նվազեցմանն ուղղված աշխատանքային պլաններ **Ա42**
- 3 Ուսումնասիրել և մշակել տարածաշրջանին բնորոշ փոքր և միջին բիզնես մոդելներ, տնային տնտեսություններին, բացի տնամերձերից ստացվող համեստ եկամուտից, զբաղվածության այլ հնարավորություններ ստեղծելու նպատակով **Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր Ա43**
- 4 Ուսումնասիրել քաղաքի ջրահեռացման համակարգի վիճակը և մշակել համակարգի մաքրման, վերանորոգման պլան **Ա46**
- 5 Գյուղական բնակավայրերում ճանապարհների երկայնքով հեղեղատարների և սելավատարների հիմնում **Ա47**

ՍԵԼԱՎ		ԲՆԱԿԱՎԱՅՐ		ՌԻՍԿ
ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ		Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր		միջին

ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

- 1 Ճանապարհների վնասում
- 2 Տնամերձերի հեղեղում/վնասում

- Սելավատարների և հեղեղատարների բացակայություն
- Ջրահեռացման համակարգի աղտոտվածություն (Ստեփանավան)

Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր

ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 1 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգերի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում **Ա7**
- 2 Ուսումնասիրել քաղաքի ջրահեռացման համակարգի վիճակը և մշակել համակարգի մաքրման, վերանորոգման պլան **Ա46**
- 3 Գյուղական բնակավայրերում ճանապարհների երկայնքով հեղեղատարների և սելավատարների հիմնում **Ա47**
- 4 Ձեռնարկել բնական սելավատարների վիճակի մոնիթորինգի և մաքրման աշխատանքներ **Ա48**

ՁԱԲՈՒՔ ԱՌԱՏ ՁՅՈՒՆ		ԲՆԱԿԱՎԱՅՐ		ՌԻՍԿ
ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ		Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր		ցածր

ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ

Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր

ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- 1 Կապի ընդհատում
- 2 Ստեփանավան քաղաքի հետ
- 3 Բնակելի տների, շենք-շինությունների վնասում
- 4 Էլեկտրամատակարարման խափանում
- 5 Մննդի և պարենի պակաս

- Միջհամայնքային ճանապարհների խցանում:
- Բնակելի տների, շենք-շինությունների ֆիզիկական վատ վիճակ
- Էլեկտրահաղորդակցման համակարգի ֆիզիկական վատ վիճակ
- Համապատասխան տեխնիկայի բացակայություն
- Ֆինանսա-վարկային ծառայությունների դժվարիասանելիություն
- Ճանապարհների խցանման պատճառով մննդի և պարենի մատակարարման դժվարություններ
- Գյուղական բնակչության սոցիալական վատ պայմաններ:
- Բնակչության շրջանում համապատասխան գիտելիքների պակաս
- Վաղ ազդարարման համակարգի բացակայություն

- 1 ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում: **Ա1**
- 2 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում **Ա7**
- 3 Գյուղատնտեսության պահեստավորման և պահպանման համապատասխան կառույցների հիմնում (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա4**
- 4 Ուսումնասիրել բնակելի տների և շենք-շինությունների ֆիզիկական վիճակը, միաժամանակ գնահատելով կլիմայի փոփոխության բացասական ազդեցության իրական չափը և մշակել կորուստների նվազեցմանն ուղղված աշխատանքային պլաններ **Ա42**
- 5 Նախաձեռնել քայլեր շտապ օգնության և փրկարար ծառայությունների հասանելիության և մննդափորքի մատակարարման ապահովմանն ուղղությամբ՝ համապատասխան տեխնիկայի ձեռքբերում **Ա30**
- 6 Ուսումնասիրել և մշակել տարածաշրջանին բնորոշ փոքր և միջին բիզնես մոդելներ, տնային տնտեսությունների համար, բացի տնամերձերից ստացվող համեստ եկամուտից, զբաղվածության այլ հնարավորություններ ստեղծելու նպատակով /Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր/ **Ա43**
- 7 Էներգիայի այլընտրանքային աղբյուրների հիմնում հիմնում (դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, վարչական շենք) **Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր** **Ա44**
- 8 Խթանել արագ արձագանքման և առաջին օգնության կամավորական խմբերի ստեղծումը երիտասարդների ներգրավմամբ, համագործակցելով համապատասխան կառույցների և ծառայությունների հետ (**Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր**) **Ա45**

ԶԲՈՍԱԾՐՋՈՒԹՅՈՒՆ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

	Ստեփանավան	Արմանիս	Ուրասար	Կաթնաղբյուր
	Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոօդերևութաբանական կամ դրանց հետևանքով զարգացող վտանգերի նկատմամբ (■ -ցածր, ■ -միջին, ■ -բարձր)			
	Խ	Խ	Խ	Խ
	Վ – վտանգի հավանականություն (■ -ցածր, ■ -միջին, ■ -բարձր), Ռ – ռիսկ (■ -ցածր, ■ -միջին, ■ -բարձր), ■ -վտանգ չի սպառնում			
	Վ	Ռ	Վ	Ռ

Երաշտ / Տևական չորային եղանակ								
Տևական / հորդառատ անձրևներ								
Սողանք / Փլուզում								
Քարաթափում								

ՉՔՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ` ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՔԱՐԱԹԱՓՈՒՄ ՓԼՈՒՉՈՒՄ		ԲՆԱԿԱՎԱՅՐ		ՌԻՍԿ
				ցածր
ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ		
<ol style="list-style-type: none"> Հանգստյան գոտի տանող ճանապարհի խցանում Չբոսաշրջիկների անվտանգության ռիսկի բարձրացում 	<ul style="list-style-type: none"> Եղանակային դրսևորումներ` տևական հորդառատ անձրև, երկարատև չորային եղանակ, կայծակ, Երկրաշարժ Ճանր տեխնիկա 	<ol style="list-style-type: none"> Վտանգավոր հատվածներում զգուշացնող նշանների տեղադրում Ա57 ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում: Ա1 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում Ա7 Համապատասխան կառույցների հետ համագործածկությամբ վտանգավոր գոտիներում վտանգի կանխարգելմանն ու կանխմանը ուղղված աշխատանքների պլանավորում և իրականացում Ա49 		

ԵՐԱՇՏ ՏԵՎԱԿԱՆ ՉՈՐԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ		ԲՆԱԿԱՎԱՅՐ		ՌԻՍԿ
				միջին
ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ		

- | | |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1 Չբոսաշրջիկների թվի անկում 2 Եկամտի նվազում 3 Առողջական վիճակի վատթարացում 4 Անտառային հրդեհների թվի աճ | <ul style="list-style-type: none"> • Հանգստյան և ռեկրեցիոն գոտիների վիճակի վատթարացում • Խմելու ջրի քանակի նվազում • Թունավորումների, ինֆեկցիոն, սրտանոթային և շնչառական հիվանդությունների և սեզոնային այլերգիաների աճ • Զրոնիկ հիվանդությունների սրացման և կյանքին սպառնացող դեպքերի աճ • Համապատասխան գիտելիքների պակաս |
|---|--|

- 1 ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում: **Ա1**
- 2 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում **Ա7**
- 3 Բուսածածկ տարածքներում և անտառներում հրդեհային անվտանգության կանոնների տեղեկատվական վահանակների տեղադրում **Ա50**
- 4 Հանգստյան և ռեկրեցիոն գոտիներում աղբամանների տեղադրում **Ա51**
- 5 Հանգստյան և ռեկրեցիոն գոտիների մոնիթորինգի կազմակերպում **Ա52**
- 6 Չբոսաշրջային ոլորտում ներգրավվածների իրազեկվածության բարձրացում ԿՓ և զբոսաշրջության վրա ԿՓ ազդեցության վերաբերյալ **Ա53**
- 7 Համապատասխան ծառայությունների և կառույցների հետ ԿՓ պայմանավորված ազդեցությունները նվազեցնելու, կանխարգելելու և արձագանքելու մեխանիզմների մշակում **Ա54**

ՏԵՎԱԿԱՆ/ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎՆԵՐ	ԲՆԱԿԱՎԱՅՐ				
	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <th style="width: 70%; text-align: center;">Ստեփանավան</th> <th style="width: 30%; text-align: center;">ՌԻՍԿ</th> </tr> <tr> <td></td> <td style="background-color: yellow; text-align: center;">միջին</td> </tr> </table>	Ստեփանավան	ՌԻՍԿ		միջին
Ստեփանավան	ՌԻՍԿ				
	միջին				

- | | |
|--|---|
| <p>ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ</p> <ol style="list-style-type: none"> 1 Չբոսաշրջիկների թվի անկում 2 Եկամտի նվազում 3 Չբոսաշրջիկների անվտանգության ռիսկի բարձրացում | <p>ԱՌԱՋԱՑՆՈՂ ԴԱՏՃԱՌ</p> <ul style="list-style-type: none"> • Երթուղիների դժվարանցանելիություն • Զարաթափման և փլուզման հավանականություն • Չբոսաշրջությամբ զբաղվողների շրջանում համապատասխան գիտելիքների պակաս • Հանգստյան և ռեկրեցիոն գոտիների վիճակի վատթարացում |
|--|---|

- ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**
1. ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում **Ա1**
 2. Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում **Ա7**
 3. Զարաթափման և փլուզման գոտիների մոնիթորինգի կազմակերպում **Ա55**
 4. Համագործակցության դաշտի հիմնում զբոսաշրջության ոլորտում ներգրավվածների և քաղաքում գործող «ԼՈՐԻԷ» փրկարար ջոկատի միջև՝ երթուղիներում զբոսաշրջիկների անվտանգության ապահովման համար **Ա56**

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Ստեփանավան	Արմանիս	Ուրասար	Կաթնաղբյուր
Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոօդերևութաբանական կամ դրանց հետևանքով զարգացող վտանգների նկատմամբ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր)			

	Խ		Խ		Խ		Խ	
	Վ – վտանգի հավանականություն (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), Ռ – ռիսկ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), ■-վտանգ չի սպառնում							
	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ
Ուժեղ քամիներ	■	■	■	■	■	■	■	■
Սառնամանիք /Տևական սաստիկ ցուրտ	■	■	■	■	■	■	■	■

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ՝ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱԿՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՏԵՎԱԿԱՆ ՍԱՍՏԻԿ ՑՈՒՐՏ ՈՒԺԵՂ ԶԱՄԻՆԵՐ		ԲՆԱԿԱՎԱՅՐ	
		Ստեփանավան	ՌԻՍԿ
		Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	միջին բարձր
ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱՑՆՈՂ ԴԱՏՃԱՌ	ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	
<ol style="list-style-type: none"> Էլեկտրամատակարարման համակարգի վնասում Էլեկտրամատակարարման խաթարում Անտառահատումների աճ 	<ul style="list-style-type: none"> Գազամատակարարման բացակայություն Գյուղական բնակչության սոցիալական վատ պայմաններ Էլեկտրամատակարարման համակարգի գերբեռնվածություն 	<ol style="list-style-type: none"> ԿՓ և դրա հետ կապված ռիսկերի և համապատասխան արձագանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում բնակչության շրջանում Ա1 Կանխատեսման, տեղեկատվական և ազդարարման համակարգի մշակում համապատասխան մարմինների հետ և կիրառում Ա7 Համապատասխան ծառայությունների և կառույցների հետ ԿՓ պայմանավորված ազդեցությունները նվազեցնելու, կանխարգելելու և արձագանքելու մեխանիզմների մշակում Ա54 Ուսումնասիրել և մշակել տարածաշրջանին բնորոշ փոքր և միջին բիզնես մոդելներ, տնային տնտեսություններին, բացի տնամերձերից ստացվող համեստ եկամուտից, զբաղվածության այլ հնարավորություններ ստեղծելու նպատակով (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) Ա43 Գազաֆիկացում /Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր/ Ա58 Էներգիայի այլընտրանքային աղբյուրների հիմնում (դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, վարչական շենք) Արմանից, Ուրասար, Կաթնաղբյուր Ա44 Համապատասխան կառույցների հետ Էլեկտրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների պլանավորում և իրականացում համակարգի բարելավման աշխատանքների պլանավորում և իրականացում (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) Ա59 Համայնքի եներգաարդյունավետության և Էներգախնայողությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների պլանավորում և իրականացում Ա60 	

ԷԿՈՂԱՄԱԿԱՐԳԵՐ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

	Ստեփանավան	Արմանիս	Ուրասար	Կաթնաղբյուր
	Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոդերևութաբանական կամ դրանց հետևանքով զարգացող վտանգների նկատմամբ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր)			
	■	■	■	■

Վ – վտանգի հավանականություն (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), Ռ – ռիսկ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), ■-վտանգ չի սպառնում								
	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ
Ուժեղ քամիներ	■	■	■	■	■	■	■	■
Առատ ձյուն	■	■	■	■	■	■	■	■
Տևական / հորդառատ անձրևներ	■	■	■	■	■	■	■	■

ԷԿՈՂԱՄԱԿԱՐԳԵՐ՝ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱԿՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՏԵՎԱԿԱՆ/ՀՈՐԴԱՌԱՍ ԱՆՁՐԵՎՆԵՐ ԱՌԱՏ ՁՅՈՒՆ		ԲՆԱԿԱԿԱՅՐ	ՌԻՍԿ
ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ	Ստեփանավան	միջին
<p>1. Ձորագետի ախտոտում</p>	<ul style="list-style-type: none"> Բաց աղբավայր Ձորագետի կիրճում, որտեղ կատարվում է տարածաշրջանի աղբահանությունը Արմանիսի ոսկու հանքի թափոններ 	<p>ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ</p> <ol style="list-style-type: none"> Համապատասխան գերատեսչությունների հետ աղբավայրի կոնսերվացման պլանի մշակում և իրականացում, աղբահանության ժամանակակից տեխնոլոգիաների, թափոնների հավաքման, տեսակավորման, տեղափոխման, պահպանման, անվտանգ հեռացման մեխանիզմների ներդրմամբ աղբահանության կազմակերպման հնարավորությունների ուսումնասիրում Ա61 Համայնքում գործող ոլորտային ՀԿ-ների հետ համատեղ աղբահանության ժամանակակից տեխնոլոգիաների, թափոնների հավաքման և տեսակավորման ներդրմամբ ծրագրերի մշակում և իրականացում Ա62 Օդի, ջրի և հողի մեջ վնասակար նյութերի պարունակության որոշման համար հետազոտությունների կազմակերպում և համապատասխան միջոցառումների պլանավորում Ա40 	

ՈՒԺԵՂ ԶԱՄԻ		ԲՆԱԿԱԿԱՅՐ	ՌԻՍԿ
ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ	Արմանիս, Ուրասար	միջին
<p>1. Շրջակա միջավայրի ախտոտում</p>	<ul style="list-style-type: none"> Ուժեղ քամիների հետևանքով հանքի թափոններից բարձրացած փոշին տարածվում է Արմանիս, Ուրասար բնակավայրերի շրջակայքով, ախտոտելով օդը, ջուրը, բույսերը, ինչը վտանգում է մարդկանց առողջությունը: 	<p>ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ</p> <ol style="list-style-type: none"> Կանաչ տարածքների ընդլայնում Ա29 Օդի, ջրի և հողի մեջ վնասակար նյութերի պարունակության որոշման համար հետազոտությունների կազմակերպում և համապատասխան միջոցառումների պլանավորում Ա40 	

ԱՆՏԱՌԱՅԻՆ / ԽՈՏԱԾԱԾԿ ՏԱՐԱԾԵՆԵՐԻ ՀՐԴԵՅՆԵՐ		ԲՆԱԿԱԿԱՅՐ	ՌԻՍԿ
ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ	Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր	ցածր միջին
<p>1. Շրջակա միջավայրի վատթարացում</p>	<ul style="list-style-type: none"> Գիտելիքի պակաս 	<p>ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ</p> <ol style="list-style-type: none"> Բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացում Ա72 	

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Վտանգ	Ստեփանավան		Արմանիս		Ուրասար		Կաթնաղբյուր	
	Խ – բնակավայրի խոցելիությունը հիդրոտեղակառուցման կամ դրանց հետևանքով զարգացող վտանգների նկատմամբ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր)							
	Խ		Խ		Խ		Խ	
	Վ – վտանգի հավանականություն (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), Ռ – ռիսկ (■-ցածր, ■-միջին, ■-բարձր), ■-վտանգ չի սպառնում							
	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ	Վ	Ռ
Երկրաշարժ	■	■	■	■	■	■	■	

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱԿՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺ		ԲՆԱԿԱՎԱՅՐ	ՌԻՍԿ
		Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր	միջին
		ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	
<p>ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ</p> <p>1 Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնալիք</p> <p>2 Բնակելի տների, շենք-շինությունների վնասում</p> <p>3 Ենթակառուցվածքների վնասում</p> <p>4 Նյութական և մշակութային կորուստներ</p> <p>5 Սննդի և պարենի պակաս</p> <p>6 Երկրորդային երևույթների առաջացման ռիսկ</p>	<p>ԱՌԱՋԱՑՆՈՂ ՊԱՏՃԱՌ</p> <ul style="list-style-type: none"> Բնակչության շրջանում համապատասխան գիտելիքների պակաս Բնակելի տների, շենք-շինությունների ֆիզիկական վատ վիճակ Համապատասխան տեխնիկայի պակաս Կառավարման մարմինների պատրաստվածության ոչ անհրաժեշտ մակարդակ Սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունների ոչ անհրաժեշտ մակարդակ Ֆինանսավարկային ծառայությունների դժվարհասանելիություն Բնակչության սոցիալական վատ պայմաններ 	<p>1. Բնակչության տարբեր շերտերի համար ուժեղ երկրաշարժերին պատրաստվածությանն ուղղված ուսուցողական ծրագրերի մշակում և ներդրում համապատասխան կառույցների (ԱԻՆ, «ԼՈՒԷ» փրկարար ջակատ) հետ Ա63</p> <p>2. Կարևոր և կենսական նշանակության օբյեկտների, ենթակառուցվածքների սեյսմիկ ռիսկի գնահատում Ա64</p> <p>3. Կառավարման մարմինների պատրաստվածության աստիճանի բարձրացում համապատասխան կառույցների կողմից իրականացվող դասընթացներին և վարժանքներին մասնակցությամբ Ա65</p> <p>4. Ուժեղ երկրաշարժի հետևանքով երկրորդային՝ բնական և տեխնածին երևույթների առաջացման ռիսկի գնահատում Ա66</p> <p>5. Գյուղական բնակավայրերի տարածքի սեյսմիկ ռիսկի գնահատում Ա67</p> <p>6. Համապատասխան կառույցների (ԱԻՆ, բժշկական և փրկարար ծառայություն, ոստիկանություն, այլ) հետ համատեղ երկրաշարժի տարբեր սցենարների մշակում և վարժանքների իրականացում Ա68</p> <p>7. Համայնքային կարողությունների զարգացմանն ուղղված առկա կարողությունների գնահատում և «Աղետների ռիսկի կառավարման համայնքային ֆոնդի» հիմնում Ա69</p> <p>8. Էներգիայի այլընտրանքային աղբյուրների, ջրի կուտակման ռեզերվուարների, Աի արձագանքման անհրաժեշտ առաջնային պարագաների պահուստի ստեղծում Ա70</p> <p>9. Հանրային շենք-շինությունների խոցելիության նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում Ա71</p> <p>10. Ուսումնասիրել և մշակել տարածաշրջանին բնորոշ փոքր և միջին բիզնես մոդելներ, տնային տնտեսությունների համար, բացի տնամերձերից ստացվող համեստ եկամուտից, զբաղվածության այլ հնարավորություններ ստեղծելու նպատակով (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) Ա43</p> <p>11. Խթանել արագ արձագանքման և առաջին օգնության կամավորական խմբերի ստեղծումը երիտասարդների ներգրավմամբ, համագործակցելով համապատասխան կառույցների և ծառայությունների հետ (Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր) Ա45</p>	

4.2. Համայնքի կողմից ընտրված գերակա լուծումներ

Կատարված աշխատանքի արդյունքները 2023թ. փետրվարի 6-7-ին ներկայացվեցին համայնքային ակտիվին և ղեկավարությանը, ոլորտ առ ոլորտ քննարկելով բացահայտված ռիսկերը և ներկայացնելով հարմարվողականության համապատասխան առաջարկները:

Հանդիպման մասնակիցներին ներկայացվեց ուսումնասիրության գործընթացը: Համայնքային մակարդակով կլիմայի փոփոխության միտումների գնահատումը հիմնված է եղել բնակչության շրջանում հարցումների, ֆոկլուս-խմբերի հետ զրույցների, ինչպես նաև համայնքի ղեկավար կազմի և ոլորտային մասնագետների դիտարկումների ու կարծիքների վրա, քանի որ համայնքում չկան համապատասխան երկարաժամկետ տվյալներ ջերմաստիճանի, տեղումների, քամիների և այլ երևույթների վերաբերյալ: Առկա տվյալները հիմնականում մարզային և ազգային մակարդակի են: Եվ համաձայն այդ տվյալների մարզում վերջին տասնամյակներին նկատվում է եղանակային և հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների փոփոխության միտումներ:

Հանդիպման մասնակիցները քննարկումների ընթացքում համաձայնվեցին, որ տեղական մակարդակում կլիմայի փոփոխության ազդեցության կամ կլիմայական ռիսկերի մասին շատ թե քիչ իրականությանը մոտիկ եզրահանգումների գալը բավականին նուրբ խնդիր է: Եվ բնակավայրերում որևէ վտանգի ազդեցության գոտում գտնվող յուրաքանչյուր համակարգի կամ տարրի՝ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված զգայունությունը վտանգների սաստկացման կամ եղանակային վայրիվերումների նկատմամբ կախված է բազմաթիվ տարաբնույթ գործոններից: Ավնհայտ է, որ բնության մեջ տեղի ունեցող վտանգավոր երևույթները ոչ այնքան ստեղծում են նոր ռիսկեր, որքան խորացնում են արդեն գոյություն ունեցողները: Եվ այդ ռիսկերի առաջացման արմատները, շատ հաճախ, ոչ թե հետևանք են կլիմայի փոփոխության, այլ արդյունք՝ մարդու վարքագծի: Այն է.

- գործունեություն կամ անգործություն,
- ոչ արդյունավետ կառավարում,
- անձնական-հանրային շահերի բախում,
- իմացության և գիտելիքի պակաս,
- մասնագիտական, այդ թվում իրավական և ֆինանսական հարցերի խորհրդատվության հասանելիություն,
- պետության դերի և անելիքների վերաբերյալ բնակչության շրջանում հստակության բացակայություն:

Փորձագիտական թիմն իր վերլուծություններում աշխատել է հաշվի առնել վերը նշված բոլոր գործոնները, որպեսզի

- նախ՝ իր եզրակացություններում լինի հնարավորինս հստակ կլիմայի նկատմամբ բնակավայրերի խոցելիությունը և ռիսկերը բացահայտելու հարցում,
- երկրորդ՝ հարմարվողականության հնարավոր ուղղությունների վերաբերյալ տրամադրի այնպիսի առաջարկություններ, որոնք կլինեն արդիական, թիրախային և հնարավորինս իրատեսական:

Ներկայացված առաջարկները դիտարկվել են հաշվի առնելով համայնքի ֆինանսական և տնտեսական հնարավորություններն, ինչպես նաև առկա խոչընդոտները: Քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ համայնքի ուժերից վեր է ֆինանսական, մասնագիտական կամ այլ անհրաժեշտ ներդրումներ պահանջող որոշ նախագծերի իրականացումը, քանի որ համայնքը չունի նման կարողություններ: Այդ նախագծերը պահանջում են երկարաժամկետ լուծում և պետք է իրականացվեն կառավարության աջակցությամբ:

Քննարկումների ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ կլիմայի փոփոխության ազդեցությունն այսօր դժվար է ընկալվում և այդքան էլ չի կարևորվում բնակչության կողմից: Հիմնականում արծարծվում են անմիջապես տեսանելի եղանակային անոմալիաների հետևանքները: Ուստի, անհրաժեշտ է ապահովել բնակչության համար տեղեկատվության հասանելիություն և համապատասխան դասընթացների կազմակերպում, ինչը հնարավորություն կտա բարձրացնել հասարակության գիտակցությունը և շահագրգռել նրանց ունենալ ակտիվ մասնակցություն հարմարվողականության միջոցառումների իրագործման հարցում:

Քննարկումների ընթացքում արձանագրվեց նաև այն փաստը, որ կլիմայի փոփոխության նկատմամբ առավել զգայուն են այն համակարգերը, որոնց զգալի վնաս է հասցվում մարդկային գործունեության պատճառով: Համապատասխանաբար, մեծ է նաև այդ համակարգերի խոցելիության խորացման հավանականությունը, եթե չձեռնարկվեն իրատեսալ քայլեր մարդու

չիմացությամբ, անկարողությամբ կամ անպատասխանատվությամբ պայմանավորված նման վարքագիծը շտկելու ուղղությամբ:

Քննարկման մասնակիցները նշեցին նաև, որ ունեն խորհրդատվական աջակցության կարիք վերոհիշյալ հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կուզենային ծանոթանալ կլիմայի փոփոխության հարմարվողականության արտասահմանյան նմանատիպ ձեռնարկումների փորձին:

Այսպիսով, հանդիպման մասնակիցները եկան այն եզրահանգման, որ կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումները թույլ կտան մեղմացնել կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունները և ուժեղացնել դրականը, ինչպես նաև կխթանեն համայնքի բնականոն կյանքի ապահովումը, տնտեսության զարգացումը, բնակչության արտագաղթի կանխումը, առողջապահական վիճակի բարելավումը, բնակչության եկամուտների ավելացումը, բնական էկոհամակարգերի պահպանությունը և այլն:

Ստորև թվարկված են կլիմայի փոփոխության տեսանկյունից այն ռիսկերը, որոնք երկար քննարկումներից հետո մասնակիցները համաձայնեցին ընդունել որպես Ստեփանավան խոշորացված համայնքի համար առաջնային լուծում պահանջող խնդիրներ:

Համայնքի կողմից ընտրված կլիմայի փոփոխության հարմարվողականության գերակա լուծումներ

Ոլորտ	Բնակավայր	Լուծում	Լուծման կոդ	Ֆինանսավորման հնարավոր ուղիներ ⁹
Գյուղատնտեսություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Հակակարկտային համակարգերի/միջոցների տեղադրում	Ա3	
Գյուղատնտեսություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Ուսումնասիրել կլիմայի փոփոխությանը հարմարեցված /ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն/ մշակաբույսերի և սորտերի ներդրման հնարավորությունները և աջակցել բնակչությանը սերմերի և տնկիների ձեռքբերման գործում, ապահովելով, միաժամանակ, այդ բուսատեսակների մշակման հետ կապված մասնագիտական խորհրդատվություն	Ա9	
Գյուղատնտեսություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Անասնաբուծության համակարգերի արտադրողականության և կայունության բարելավում՝ խոտհարքների արդյունավետ կառավարում, գյուղատնտեսական կենդանիների տեսակների փոփոխություն, նոր բարձր մթերատու հատկանիշներ ունեցող կաթնատու և մսատու ցեղերի ներմուծում և բուծում	Ա14	
Գյուղատնտեսություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Մեղվաբուծության զարգացումը խթանելու համար, ապահովել կլիմայի փոփոխությանը դիմակայելու մասնագիտական խորհրդատվության կազմակերպում, այդ թվում՝ նաև հիվանդությունների կանխարգելմանն ու բուժմանն ուղղված խորհրդատվություն	Ա19	
Գյուղատնտեսություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Գյուղատնտեսական նոր տեխնիկայի ձեռքբերում, գյուղատնտեսական տեխնիկայի համայնքային կենտրոնի հիմնում	Ա20	
Գյուղատնտեսություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում և ջրահեռացման համակարգերի կառուցում	Ա21	
Մարդու առողջություն	Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Բուժկետերի պայմանների և հագեցվածության բարելավում	Ա28	
Մարդու առողջություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար	Շտապ օգնության և փրկարար ծառայությունների հասանելիության և սննդամթերքի մատակարարման ապահովման ուղղությամբ քայլերի ձեռնարկում	Ա30	

⁹ Ֆինանսավորման հնարավոր աղբյուրների վերաբերյալ տես ստորև՝ էջ 52

	Կաթնաղբյուր	(համապատասխան տեխնիկայի ձեռքբերում)		
Մարդու առողջություն	Ստեփանավան	Բուժաշխատողների իրազեկվածության բարձրացում ԿՓ և մարդու առողջության վրա ԿՓ ազդեցության վերաբերյալ	Ա33	
Ջրային ռեսուրսներ	Ուրասար Կաթնաղբյուր	Խմելու ջրի մատակարարման բարելավման աշխատանքների իրականացում (Ուրասար՝ ներքին ցանց, Կաթնաղբյուր՝ ջրհավաք ավազան, կապտած)	Ա37	
Ջրային ռեսուրսներ	Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Ջրային ռեսուրսների կառավարման պլանի մշակում և ներդրում	Ա38	
Ջրային ռեսուրսներ	Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Խմելու ջրի պահեստավորման, պահպանման և մաքրման համապատասխան կառույցների հիմնում	Ա41	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Գազաֆիկացում	Ա58	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Բնական սելավատարերի վիճակի մոնիթորինգի և մաքրման աշխատանքներ ձեռնարկում	Ա48	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Ուսումնասիրել և մշակել տարածաշրջանին բնորոշ փոքր և միջին բիզնես մոդելներ, տնային տնտեսություններին, բացի տնամերձերից ստացվող համեստ եկամուտից, զբաղվածության այլ հնարավորություններ ստեղծելու նպատակով	Ա43	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Խթանել արագ արձագանքման և առաջին օգնության կամավորական խմբերի ստեղծումը երիտասարդների ներգրավմամբ, համագործակցելով համապատասխան կառույցների և ծառայությունների հետ	Ա45	
Չբուսաշրջություն	Ստեփանավան	Համապատասխան կառույցների հետ համագործակցությամբ վտանգավոր գոտիներում վտանգի կանխարգելմանն ու կանխմանն ուղղված աշխատանքների պլանավորում և իրականացում	Ա49	
Չբուսաշրջություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար	Հանգստյան և ժամանցի գոտիներում աղբամանների տեղադրում	Ա51	
Չբուսաշրջություն	Ստեփանավան Արմանիս Ուրասար	Բուսածածկ տարածքներում և անտառներում հրդեհային անվտանգության կանոնների տեղեկատվական վահանակների տեղադրում	Ա50	
Էներգետիկա	Ստեփանավան Արմանիս	Էներգիայի այլընտրանքային աղբյուրների հիմնում (հատկապես դպրոցում, մանկապարտեզում, բուժկետում, վարչական շենքում	Ա44	

	Ուրասար Կաթնաղբյուր	և հանրային նշանակության այլ շենքերում)		
Էներգետիկա	Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Համապատասխան կառույցների հետ Էլեկտրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների պլանավորում և իրականացում	Ա59	
Էներգետիկա	Ստեփանավան Արմանիս	Համայնքի Էներգաարդյունավետության և Էներգախնայողությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների պլանավորում և իրականացում	Ա60	
Էկոհամալարգեր	Ստեփանավան	Համապատասխան գերատեսչությունների հետ աղբավայրի կոնսերվացման պլանի մշակում և իրականացում, աղբահանության ժամանակակից տեխնոլոգիաների, թափոնների հավաքման, տեսակավորման, տեղափոխման, պահպանման, անվտանգ հեռացման մեխանիզմների ներդրմամբ աղբահանության կազմակերպման հնարավորությունների ուսումնասիրում:	Ա61	
Էկոհամակարգեր	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Համայնքում գործող ոլորտային ՀԿ-ների հետ համատեղ աղբահանության ժամանակակից տեխնոլոգիաների, թափոնների հավաքման և տեսակավորման ներդրմամբ ծրագրերի մշակում և իրականացում	Ա62	
Էկոհամակարգեր	Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Բնապահպանական իրազեկվածության բարձրացում	Ա72	
Էկոհամակարգեր	Ստեփանավան, Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Կանաչ տարածքների ընդլայնում	Ա29	

Համայնքի կողմից ընտրված երկրաշարժի ռիսկի նվազեցման գերակա լուծումներ

Բնակավայր	Լուծում	Լուծման կող	Ֆինանսավորման հնարավոր ուղիներ
Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Համապատասխան կառույցների (ԱԻՆ, բժշկական և փրկարար ծառայություն, նստիկանություն, այլ) հետ համատեղ երկրաշարժի տարբեր սցենարների մշակում և վարժանքների իրականացում	Ա68	
Ստեփանավան Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Բնակչության տարբեր շերտերի համար ուժեղ երկրաշարժերին պատրաստվածությանն ուղղված ուսուցողական ծրագրերի մշակում և ներդրում համապատասխան կառույցների (ԱԻՆ, «ԼՈՌԷ» փրկարար ջոկատ) հետ	Ա63	

Ստեփանավան	Ուժեղ երկրաշարժի հետևանքով երկրորդային՝ բնական և տեխնածին երևույթների առաջացման ռիսկի գնահատում	Ա66	
Արմանիս Ուրասար Կաթնաղբյուր	Խթանել արագ արձագանքման և առաջին օգնության կամավորական խմբերի ստեղծումը երիտասարդների ներգրավմամբ՝ համագործակցելով համապատասխան կառույցների և ծառայությունների հետ	Ա45	

4.3. Համայնքի կողմից ընտրված գերակա լուծումների ֆինանսավորման հնարավոր աղբյուրները

Հաշվի առնելով ՀՀ համայնքների ֆինանսական փոքր ներուժը, ինչը ներկայացված է համայնքների ֆինանսական վերլուծության բաժիններում, և համեմատելով դրանք համայնքներում արձանագրված խնդիրների և դրանց լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հետ, պարզ է դառնում, որ համայնքները ինքնուրույն ունակ չեն դրանց արձագանքել ամբողջ ծավալով, հատկապես, երբ խոսքը վերաբերվում է կապիտալ ներդրումային ծրագրերին: Այդ իսկ պատճառով, համայնքները պետք է հնարավորինս ներգրավվեն ֆինանսական միջոցներ այլ աղբյուրներից, որոնց թվում կարող են լինել:

ա) Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում սուբվենցիաներ

Համայնքների բյուջեների եկամուտների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռները ընդհանուր ծախսերում կազմում է համապատասխանաբար 2017թ-ի համար 90.6% և 9.4% է, իսկ 2021թ-ի համար 67.8% և 32.2%¹⁰: Սա նշանակում է, որ համայնքներում գրեթե 3.5 անգամ աճել են կապիտալ ծախսերը, սակայն, եթե վերլուծենք նաև համայնքների բյուջեների ֆոնդային մասի եկամուտները կտեսնենք, որ դրանց մեջ շուրջ 68%-ը կազմում են պաշտոնական դրամաշնորհները: Հետևաբար, համայնքների համար պետական բյուջեն կապիտալ ծրագրերի իրականացման նշանակալի աղբյուր է հանդիսանում: Ուստի, սուբվենցիոն ծրագրերի հայտերը կազմելիս անհրաժեշտ է հենվել համայնքի համար դուրս բերված առաջնահերթություններին, ինչը զգալի կավելացնի թե սուբվենցիոն ծրագրերի միջոցով ֆինանսավորում ներգրավվելու հավանականությունը, և թե այդ ծրագրերի իրականացման հետևանքով ստացված արդյունքները: Նման ծրագրերը կարող են վերաբերվել ենթակառուցվածքների վերանորոգմանը և արդիականացմանը, օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում ջրագծի վերանորոգման ծրագրերին, կամ էներգետիկայի ոլորտում արդյունավետ լուծումների կիրառմանը, որոնք պետք է համապատասխանեն կառավարության կողմից սահմանված սկզբունքներին և ցուցանիշներին¹¹:

բ) Միջազգային դոնոր կազմակերպություններ և ֆոնդեր

ՀՀ 2021թ. պետական բյուջեի միջոցով օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի համապատասխան գործակալություններ¹², Համաշխարհային բանկ, Եվրասիական զարգացման բանկ, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, ԱՄՆ միջազգային զարգացման գրասենյակ, ԵՄ-ի հարևանության ներդրումային բանկ, Վերականգնման և զարգացման եվրոպական բանկ, Վերականգնման և զարգացման միջազգային բանկ, Ասիական զարգացման բանկ, Գերմանիայի զարգացման վարկի բանկ (KfW), Ֆրանսիայի կառավարություն և այլն), կողմից ՏԿԵՆ-ի համակարգին տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ՀՀ մարզերում և Երևան համայնքում նախատեսվել է իրականացնել շուրջ 61 ծրագիր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 64485.0 մլն. դրամ: Վերոնշյալ ծրագրերի վարկային համաձայնագրերը կնքվել են ՀՀ կառավարության (լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն) և նշված բանկերի միջև, որոնց համաձայն ստացված վարկային միջոցների (մայր գումարի և դրանց տոկոսագումարների) մարումը կատարվում է ՀՀ պետական բյուջեից¹³: Բացի այդ, համայնքներում բազմաթիվ ծրագրեր են իրականացվում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից, որոնք ֆինանսավորվում են նշած և այլ միջազգային կազմակերպությունների կողմից: Հետևաբար, այն լուծումները, որոնք համապատասխանում են այդ կազմակերպությունների սահմանված գերակայություններին կարող են ֆինանսավորում ստանալ նրանց կողմից:

¹⁰ Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2021թ.), գիրք 14 / Խմբ.՝ Վահրամ Շահբաջյանի.- Եր.: Ասողիկ, էջ 81

¹¹ Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման, ներկայացման, դրանց քննարկման ու հաստատման կարգ (<https://api.mtad.am/api/file/download/page/5654>)

¹² Դրանց կազմում են ինչպիսիք են ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիրը, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և այլն:

¹³ Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2021թ.), գիրք 14 / Խմբ.՝ Վահրամ Շահբաջյանի.- Եր.: Ասողիկ, էջ 57

Առանձին ուշադրության են արժանի կլիմայի փոփոխության և բնապահպանական մարտահրավերների դիմակայելուն ուղղված միջազգային ֆինանսական մեխանիզմները, որոնք ֆինանսական աջակցություն են ցուցաբերում զարգացող երկրներին, այդ թվում՝ Հարմարվողականության հիմնադրամը¹⁴, Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամը¹⁵ և Կանաչ կլիմայական հիմնադրամը¹⁶: Նշված հիմնադրամների ֆինանսավորման քաղաքականության առաջնահերթությունների շարքում առանձին տեղ են զբաղեցնում տեղական մակարդակում կլիմայի փոփոխության և բնապահպանության հետ կապված խնդիրների վերաճմանը և լուծմանը, մասնավորապես համայնքների համապատասխան կարողությունների հզորացման և համայնքային զարգացման համատեքստում: Համայնքներում կլիմայական ռիսկերի նվազեցման և հարմարվողականության ծրագրերի ֆինանսավորումը հիշատակված հիմնադրամներից կարող է իրականացվել համայնքի և այդ ոլորտում պետական լիազոր մարմնի հետ համագործակցությամբ, ինչպես նաև համայնքում գործող քաղհասարակության կազմակերպությունների ուղղակի հայտերի միջոցով: Վերջինիս վառ օրինակը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի սահմաններում գործող «Փոքր դրամաշնորհների նախագիծն» է (ՓԴՆ), որը հնարավորություն է ստեղծում համայնքային ծրագրերի ուղիղ ֆինանսավորման (<https://www.sgp.am/am/index>):

գ) Մասնավոր հատված

Մասնավոր հատվածի ներդրումների և իրականացված ծրագրերի տեսակարար կշիռը համայնքներում բավականին ցածր է: Նման ներդրումները հիմնականում իրականացվում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում: Ներդրումների ցածր լինելու պատճառներից են տեղական իշխանությունների՝ տնտեսական ակտիվության վրա ազդելու լիազորությունների բացակայությունը, համայնքում գործող տնտեսավարողների սակավ ֆինանսական կարողությունները, բիզնես համայնքի շրջանակներում իրազեկվածության ցածր մակարդակը և այլն: Նման պայմաններում տեղական իշխանությունների առաջնահերթ խնդիրներից է օգնել մոբիլիզացնել տնտեսավարող սուբյեկտների ռեսուրսները՝ նպաստել կոոպերատիվների, միավորումների ստեղծմանը, որոնք ունակ կլինեն համատեղ ուժերով լուծել վերահանված խնդիրները: Այս խնդիրների շրջանակը կարող է ներառել գյուղատնտեսության, զբոսաշրջության ոլորտները, որտեղ մասնավոր կազմակերպությունները կարող են տնտեսական շահ հետապնդել և շահագրգռված լինեն կատարել ներդրում բիզնեսի ընդլայնման կամ ռիսկերի նվազեցման առումով:

դ) Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության

Ֆինանսավորման այս ձևը հիմնված է վերը թվարկված աղբյուրների համակցման վրա, երբ համայնքում առկա խնդիրների լուծմանը մասնակցում են պետական, համայնքային և մասնավոր հատվածի դերակատարները՝ յուրաքանչյուրը իր լիազորությունների և հետաքրքրությունների շրջանակում: Համագործակցությամբ ֆինանսավորվող այս ծրագրերը հիմնականում կրում են կապիտալ բնույթ և իրենց ծավալներով բավականին մեծ են: Դրանք կարող են ներառել ինչպես գազիֆիկացման, էլեկտրաէներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրների կիրառման ծրագրերը, այնպես էլ ջրամբարների կառուցման և ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրեր: Ծրագրերի ֆինանսավորման այս եղանակը հնարավորություն է տալիս զգալիորեն կրճատել ռիսկերը, բարձրացնել ծրագրերի կառավարման

¹⁴ Հարմարվողականության հիմնադրամը՝ միջազգային հիմնադրամ է, որը ծրագրեր է ֆինանսավորում ի աջակցություն զարգացող երկրների կլիմայի փոփոխության վնասակար հետևանքներին հարմարվելու նպատակով: Այն ստեղծվել է 2007 թվականին ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Կիոտոյի արձանագրությունների ներքո: Հայաստանը հավատարմագրված է Հարմարվողականության հիմնադրամին, <https://www.ecolur.org/hy/news/climate-change/8681/>

¹⁵ Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամը (ԳԷՖ) բազմակողմ բնապահպանական հիմնադրամ է, որը դրամաշնորհներ և համակցված ֆինանսավորում է տրամադրում զարգացող երկրներին կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության, միջազգային ջրերի, հողերի դեգրադացիայի, կայուն օրգանական աղտոտիչների, սևիկի, անտառների կայուն կառավարման, սևիկի անվտանգության և քաղաքների կայուն զարգացման հետ կապված ծրագրերի համար: Այն ամբողջ աշխարհում կենսաբազմազանության բազմակողմ ֆինանսավորման ամենամեծ աղբյուրն է և տարեկան միջինում ավելի քան 1 միլիարդ դոլար է բաշխում փոխկապակցված բնապահպանական մարտահրավերները լուծելու համար: ԳԷՖ-ը ստեղծվել է 1992 թվականին Ռիոյի երկրի զագաթնաժողովին ընդառաջ և ներառում է 184 երկիր՝ համագործակցելով միջազգային կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ: Գործում է Հայաստանում, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=53440>

¹⁶ Կանաչ կլիմայի հիմնադրամը (GCF) ստեղծվել է 2010 թվականին ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի շրջանակներում՝ աջակցելու զարգացող երկրներին կլիմայի փոփոխությանը հակազդելու նպատակով հարմարվողականության և մեղմման ծրագրեր իրականացնելու համար: Համագործակցում է ՀՀ կառավարության հետ, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12065&Reading=0>

արդյունավետությունը, ներգրավել լրացուցիչ վարկային միջոցներ կապիտալի շուկաներից և այլն:

ե) ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ

Միջազգային պրակտիկայում լայն տարածում ունի քաղաքացիական նախաձեռնությամբ ստեղծված նպատակային հիմնադրամների ստեղծումը: Նման նախաձեռնությունների հիմքում է ընկած համայնքի բնակչության վճարակազմությունը միավորվելու և միասնական ուժերով սեփական խնդիրներին լուծումներ տալու նպատակով: Այս առումով հետաքրքիր է «Խազեր» Էկոլոգիական և մշակութային ՀԿ-ի կողմից ՄԱԶԾ ՓՂՆ աջակցությամբ Հայաստանում իրականացված ծրագրի փորձը, որով թիրախային բնակավայրերում ստեղծվել և գործարկվել են կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ¹⁷:

Ի աջակցություն տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համայնքային նախաձեռնությունների առաջարկվում է նաև ուսումնասիրել Տեղական ինքնակառավարման և ենթակառուցվածքների նախարարության հատուկ այդ նպատակով մշակված ուղեցույցը¹⁸, ինչպես նաև ՄԱԶԾ աջակցությամբ ԱՌՆԱՊ հիմնադրամի կողմից մշակված ԱՌԿ համայնքային ֆոնդի ստեղծման ուղեցույցը¹⁹:

Այնուամենայնիվ, ծրագրերի ֆինանսավորման ձևերի ընտրության հարցում պետք է դիտարկել համայնքային իշխանություններին վերապահված լիազորությունները և այդ լիազորությունների շրջանակում գտնվող խնդիրների համար համայնքի բյուջեում նախատեսել միջոցներ: Միջոցների սակավության պայմաններում առաջնահերթ է իրականացնել մանրակրկիտ պլանավորում՝ որոշակի ժամանակահատվածի վրա բաշխելով համայնքային բյուջեից կատարվող ծախսերը: Նման ծրագրերը պետք է ներառվեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրում, ինչը հնարավորություն կտա տարիների համար իրականացնել աշխատանքների պլանավորում և հատկացնել համապատասխան ֆինանսական միջոցներ:

5. Եզրակացություն

Տեղական ինքնակառավարման մարմինները, որպես կանոն, նախկինում իրենց զարգացման ծրագրերը մշակելիս, գրեթե հաշվի չեն առել աղետների հետ կապված ռիսկերը: Դա պայմանավորված է եղել նրանով, որ համայնքները գրեթե ծանոթ չեն եղել ԱՌՆ ռազմավարությանը, ինչպես նաև աղետների կանխարգելման և նվազեցման հիմնական գործողությունների իրականացման համար չեն ունեցել համապատասխան ֆինանսական միջոցներ: Իսկ իրականացված գործողություններն ու ծրագրերը երբևիցե չեն կապվել աղետների և կլիմայի փոփոխության ռիսկի նվազեցման, աղետների կանխարգելման քաղաքականության հետ:

Հարկ է նշել, որ համայնքների մակարդակով չկան բավարար ռեսուրսներ՝ մեղմման և հարմարվողականության միջոցառումներ իրականացնելու և հանրային առողջապահության բնագավառում խոցելիությունը նվազեցնելու համար: Դիմակայունության բարձրացման ծրագրերում համայնքների մասնակցությունը սահմանափակ է և համայնքները բավարար առաջատար դերակատարում չեն ստանձնում այդպիսի ծրագրերում, իսկ իրականացումը շարունակում է մեծապես կախված մնալ պետական և դոնորական աջակցությունից:

Ամփոփելով, կարելի է ասել, որ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների իրականացումը պետք է հիմնված լինի տարբեր շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցության վրա: Այդ կողմերն են աղետների արձագանքման, հիդրոոլերևութաբանական, առողջապահության, գյուղատնտեսության ոլորտներն, ինչպես նաև հանրության կրթման, իրազեկման և տեղեկատվության տարածման պատասխանատու գերատեսչությունները: Բացի այդ, աղետների դիմակայման գործընթացներում մեծ դեր է տրվում նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը, որոնք ունեն որոշակի պատրաստվածություն և աշխատանքային

¹⁷ <https://www.sgp.am/am/Projects?id=79>, <http://lori.mtad.am/news/item/2020/02/21/news32/>, <https://khazer.org/wp-content/uploads/2019/10/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AF%D5%AC%D5%A5%D5%BF-14.10.2019.pdf>

¹⁸ Մեթոդական ուղեցույց Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների՝ «Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման» վերաբերյալ, ՏԿԵԵ, https://api.mtad.am//storage/pages/files/2022/11/pdf/07_12-01-sc796-6368bb5f3eccc.pdf

¹⁹ Աղետների ռիսկի կառավարման համայնքային ֆոնդի ստեղծման ուղեցույց, ՄԱԶԾ-ԱՌՆԱՊ, <http://library.cmsa.am/media/docs/000.pdf>

Նախապատմություն՝ աղետների դիմակայման տարբեր ոլորտներում մարդասիրական և զարգացման ծրագրեր ներդնելու առումով:

Ելնելով համայնքի զարգացման պլանի ռազմավարական առաջնայնությունն ունեցող ուղղություններից, որոշվեց համայնքի զարգացման նոր պլաններ մշակելու գործընթացում համապատասխան սեկտորներում հաշվի առնել նաև այն լուծումները, որոնք ճանաչվել են առաջնահերթ թե՛ համայնքի և թե՛ առանձին բնակավայրերի համար: Միևնույն ժամանակ,

<i>Բնածին վտանգ</i>	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
----------------------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-------------	-----------------

համագործակցելով համապատասխան գերատեսչությունների ու կառույցների հետ, նախանշել նշված լուծումների ֆինանսավորման հնարավոր աղբյուրներն ու դրանց ներգրավման գործնական մեխանիզմները:

6. Հավելվածներ

Հավելված 1

2012-2021 թվականներին Լոռու մարզում բնածին վտանգներից առաջացած արտակարգ դեպքերի հանրագումարն ըստ տարիների:

	Արմանիս	Կաթնաղբյուր	Ուրտասր	Ստեփանավան	Ընդամենը
Ուժեղ քամի	1		1	6	8
Առատ ձյուն	1	1	1	5	8
Կարկուտ		1	1	3	5
Արգելափակում ձյան մեջ	1	2	1	14	18
Մերկասառույց				6	6
Չեղեղում, գետերի վարարում				1	1
Երկրաշարժ				2	2
Ձնաբուք	1	2		1	4
Տեղատարափ անձրև			1		1
Վայրի կենդանիների հարձակում			1		1
Ցրտահարություն		1	1	1	3
Քարաթափում				2	2
Կայծակ			1	6	7

Ստեփանավան համայնքի մակարդակում վերջին 15 տարիների ընթացքում գրանցված արտակարգ դեպքերի հանրագումարն ըստ տարիների

	2007	2008	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2019	2020	2021	2022
Առատ ձյուն						1				1				6
Տեղատարափ անձրև					1									
Երկրաշարժ									1		1			
Կայծակ					2			3	1					1
Կարկուտ					3	1		1						
Չեղեղում, գետերի վարարում						1								
Ձնաբուք										4				
Մերկասառույց								1		5				
Ուժեղ քամի	1	1	1		1				1	1		1		
Ցրտահարություն		3												
Քարաթափում				1							1			

Հավելված 4

Համայնքին սպառնացող վտանգների հավանականության որոշման վերլուծական աղյուսակ

Վտանգ	Ստեփանավան	Արմանի	Ուրուս	Մյուսեմբուր	ԸՆԴԱՄԵՆԸ (Միջին թվաբանական)	Փոփոխության միտումը	Վտանգի դրսևորման հավանականությունն մինչև 2` ցածր մինչև 5` միջին 5-8` բարձր
Ձնաբուք/Առատ Ձյուն	3	5	5	6	4,75	↘	Միջին
Կարկտահարություն	7	7	7	7	7,00	↔	Բարձր
Ցրտահարություն	3	3	3	3	3,00	↘	Միջին
Սելավ	2	3	4	4	3,25	↘	Միջին
Ուժեղ քամի	7	7	7	7	7,00	↗	Բարձր
Երաշտ/տևական չորային եղանակ	4	4	5	5	4,50	↗	Միջին
Տևական/հորդառատ անձրևներ	4	5	5	5	4,75	↘	Միջին
Գետի վարարում/հեղհեղում			2	2	2,00	↘	Ցածր
Ամպրոպ/Կայծակ	2	2	3	3	2.50	↔	Միջին
Անտառային/խոտածածկ տարածքների հրդեհներ	4	2	3	4	3,25	↔	Միջին
Սառնամանիք/Սաստիկ ցուրտ	1	3	4	4	3,00	↘	Միջին
Սողանք	2	2	2		2,00	↔	Ցածր
Քարաթափում	2		2		2,00	↔	Ցածր
Երկրաշարժ	7	7	7	7	7,00	↔	Բարձր

Հավելված 5

Ստեփանավան համայնքի 2020-2022թթ. բյուջեների եկամուտների պլանային ցուցանիշները

Հ/հ	Եկամուտի տեսակները	2020		2021		2022	
		Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %
1	2	3	4	5	6	7	8
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	571,282.87	100.0%	782,399.84	100.0%	1,502,686.47	100%
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	84,722.10	14.8%	106,636.25	13.6%	151,968.01	10.1%
1.1.	Գույքային հարկեր անշարժ գույքից	22,796.10	4.0%	40,739.05	5.2%	42,101.00	2.8%
1.2.	Գույքային հարկեր փոխադրամիջոցներից	48,873.80	8.6%	51,900.00	6.6%	96,208.01	6.4%
1.3.	Տեղական տուրքեր	6,852.20	1.2%	7,077.20	0.9%	7,659.00	0.5%
1.4.	Պետական տուրքեր	6,200.00	1.1%	6,920.00	0.9%	6,000.00	0.4%
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ	426,014.50	74.6%	586,394.37	74.9%	1,147,309.31	76%
3	ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	60,546.27	10.6%	89,369.22	11.4%	203,409.15	14%
ա	Սեփական եկամուտներ	136,799.6	23.9%	174,347.56	22.3%	229,519.01	15%
բ	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	359,286.00	62.9%	427,916.60	54.7%	431,619.10	29%
գ	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	10,268.50	1.8%	4,795.57	0.6%	5,011.30	0%
դ	Պաշտոնական դրամաշնորհներ, պատվիրակված լիազորությունների իրականացման համար մուտքեր	5,468.77	1.0%	1,999.00	0.3%	8,887.00	1%

Ստեփանավան համայնքի 2020-2022թթ բյուջեների ծախսերը գործառնական դասակարգմամբ

Տողի NN	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	2020թ			2021թ			2022թ		
		Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝		Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝		Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝	
			վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	5	7	8	9	7	8	9	7	8	9
2000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	647,919.8	516,150.7	131,769.1	870,558.2	617,700.4	370,039.9	1,607,142.4	672,399.1	990,486.7
2100	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	144,024.8	140,159.1	3,865.8	133,058.0	128,756.3	4,301.8	245,095.0	229,340.0	15,755.0
2400	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	130,718.1	40,569.0	90,149.1	232,232.4	45,277.5	186,954.9	273,523.3	32,109.7	241,413.6
2500	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	65,466.0	65,466.0	-	61,856.1	61,856.1	-	72,184.9	67,184.9	5,000.0
2600	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	60,334.6	22,580.3	37,754.2	185,358.1	21,569.5	163,788.5	265,031.5	36,251.6	228,779.9
2800	ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	41,154.5	41,154.5	-	47,549.0	42,533.3	5,015.7	435,016.7	45,089.7	389,927.0
2900	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	191,417.2	191,417.2	-	202,179.7	192,200.7	9,979.0	309,299.7	199,688.6	109,611.2
3000	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	7,380.0	7,380.0	-	2,980.0	2,980.0	-	3,800.0	3,800.0	-
3100	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍԿՈՂ ՊԱՅՄԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	7,424.7	7,424.7	-	122,527.1	122,527.1	-	58,934.7	58,934.7	-

7. Լուսանկարներ

